

ՍՈՑԻԱԼԻՍՏԱԿԱՆ
ԳՅՈՒՂԱՏՎԵՍՄՈՒԹՅԱՆ
ԱՌԱՋԱՎՈՐՆԵՐԻ
ԳՐԱԴԱՐԱՆ



ԻՆՉՊԵՍ ՍՏԱՆԱՀ
ՀԵԿՏԱՐԻՑ ԱՌԵՎԱԶՆ
ՅՈ ՑԵՆՏՆԵՐ ԱՄԵՐԻԿԱԿԱՆ
ԿԱՄ 20 ՑԵՆՏՆԵՐ
ՅԵԳԻՊՏԱԿԱՆ ԲԱՄԲԱԿ

ԳՅՈՒՂԱՏՎԱԾ ԷՅՐԵՎԱՆ 1936 •



ՍՈՑԻԱԼԻՍՏԱԿԱՆ
ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ
ԱՌԱՋԱՎՈՐՆԵՐԻ
ԳՐԱԴԱՐԱՆ

ՅՈՒՆՈՒՍՈՎ, ՖԵԼԶՈՒԼՅՈ, ՄԻՐԶԱՅԵՎ, ՏԻՇԱԲԱՅ, ԽԱՄՐԱՅԵՎ, ՇԱ-
ՐԻՖԲԱՅ, ՈՂՈՒԼ ԿՈՒԶԵԼ ԲԱՀԲԵԴ, ՈՐԱԶ ՄԱՄԵԴ Ա.ՅՈՒԴԻ,
ԱԹՈ ԽՈԶԱԱԼԻ, ԲՈԲՈԿԱԼՈՆՈՎ ԶՈՒՐԱ, ԽՈՎՄԱՏՈՎ ԴԱԴԱԲԱՑ

**ԻՆՉՊԵՍ ՍՏԱՆԱԼ ՀԵԿՏԱՐԻՑ
ԱՌՆԿԱՋՆ 30 ՑԵՆՏՆԵՐ
ԱՄԵՐԻԿԱԿԱՆ
ԿԱՄ 20 ՑԵՆՏՆԵՐ
ՑԵԳԻՊՏԱԿԱՆ ԲԱՄԲԱԿ**

Գրանցել յեկ մշակել եմ զյուղատմտեսներ
Ա. Ա. ԳԱՏՈՎԱԿԻՑ յեկ Ա. Թ. ՄԱԿԱՐՈՎ,

ԸՆԿ. ԱՏԱԼԻՆԻ ՃԱՈՔ

ՏԱԶԻԿԱՍԱՆԻ ՅԵՎ ԹՈՒՐԲՄԵՆՍԱՆԻ
ԱՌԱՋԱՎՈՐ ԿՈԼՏՆՏԵՍԱԿԱՆՆԵՐԻ ՅԵՎ
ԿՈԼՏՆՏԵՍՈՒՅՆԵՐԻ. ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ
ՅԵՎ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՂԵԿԱՎԱՐՆԵՐԻ
ՀԵՏ ՈՒՆԵՑԱԾ ԽՈՐՃՐԴԱԿՑՈՒԹՅՈՒՆՈՒՄ

4 ԳԵՂԵՑԵՄՐԵՐԻ 1935 թ.



11-2819697

Ընկերներ, այս խորհրդակցության նախագահությունն ինձ
հանձնարարել ե յերկու բան.

Նախ՝ վոր նախագահությունը մտադիր ե խորհրդակցու-
թյանս բոլոր մասնակցողներին ներկայացնել բարձրագույն պար-
գևի՝ շքանշանի՝ գերազանց աշխատանքի համար։ (Յերկարածեվ
բուն ծափեր, «ուռու»-ներ, բացականչություններ՝ «կեցցե՛ ընկեր
Ստայինը»։ Յերկարածեվ ովացիա յեկ վողույնի բացականչություն-
ներ կուսակցության յեկ կառավարության դեկագարների հասցեյին)։

Յերկրորդ՝ վոր կառավարությունը վորոշել ե այստեղ ներ-
կայացված յուրաքանչյուր կոլտնտեսությանը տալ մի-մի բեռ-
նատար ավտո և խորհրդակցության մասնակցողներից յուրա-
քանչյուրին նվիրել մի-մի պատեփոն՝ պլաստինկաներով (ծափեր)
և ժամացույցներ-աղամարդկանց՝ գրպանի և կանանց՝ ձեռքի
(յերկարածեվ ծափահարություններ)։

Ամեն կողմից ինձ ասում են, թե ինս պարտավոր եմ մի
բան ասելու։

Բացականչություններ՝ ձիշտ ե (ծափեր)։

Ի՞նչ ասեմ։ Ամեն ինչ ասված ե։

Պարզ ե, վոր բամբակի գործը ձեզանում առաջ կգնա։ Այդ
յերեսում ե այն ամենից, ինչ վոր կատարվում ե այստեղ, մեզա-
նում։ Կոլտնտեսությունները ձեզանում աճում են, աշխատելու
ցանկություն կա, մեքենաներ կտանք, պարարտանյութ կստա-
նաք, ձեզ համար անհրաժեշտ ամեն տեսակ ոգնություն — Ժող-
կոմխորհի նախագահ ընկ. Մոլոտովը արդեն հայտարարել ե ձեզ
այդ մասին — ցուց կտրվի ձեզ։ Ուրեմն, բամբակի գործը ձե-
զանում առաջ կգնա և ունենոր կյանքը ծավալվում ե։

Բայց, ընկերներ, կա մի բան, վոր ավելի արժեքավոր ե,

քան բամբակը,—զա մեր յերկրի ժողովուրդների բարեկամությունն ե: Այս խորհրդակցությունը, ձեր ճառերը, ձեր գործերը վկայում են, զոր մեծ յերկրի ժողովուրդների միջև բարեկամությունն ամրանում ե: Դա շատ կարեոր է և նշանակալից, ընկերներ: Հին ժամանակ, յերբ մեր յերկրում իշխանության գլուխ եյին կանգնած թագավորը, կապիտալիստները և կալվածատերերը, կառավարության քաղաքականությունն այն եր, զոր մի ժողովուրդ—ուսւա ժողովուրդը լինի տիրապետող, իսկ մյուս բոլոր ժողովուրդները լինեն ստորագրյալ, ճնշվող: Դա գաղանային, գայլի քաղաքականություն եր: 1917 թվականի հոկտեմբերին, յերբ մեզանում ծագալից պրոլետարական մեծ հեղափոխությունը, յերբ մենք տապալեցինք թագավորին, կալվածատերերին և կապիտալիստներին, մեծ լենինը՝ մեր ուսուցիչը, մեր հայրն ու դաստիարակն ասաց, զոր այսուհետեւ չպետք ել լինեն վոչ տիրապետող և վոչ ել ստորագրյալ ժողովուրդներ, զոր ժողովուրդները պետք ել լինեն հավասար և ազատ: Դրանով նա թաղեց գերեզմանի մեջ հին, ցարական, բուրժուական քաղաքականությունը և հայտարարեց նոր, բոլշևիկյան քաղաքականությունը—բարեկամության քաղաքականությունը, մեր յերկրի ժողովուրդների յեղբայրության քաղաքականությունը:

Անցել ե 18 տարի գրանից հետո: Յեպ ահա մենք արդեն ունենք այդ քաղաքականության բարեկեր արդյունքները: Այս խորհրդակցությունը մի փայլուն ապացուց ե, զոր վաղուց արդեն վերջ և տրված ԽՍՀՄ-ի ժողովուրդների մեջ վաղեմի անվտանությանը, զոր անվտանությունը փոխարինվել ե փոխադարձ լիակատար վստահությամբ, զոր ԽՍՀՄ-ի ժողովուրդների մեջ բարեկամությունն աճում և ամրանում ե: Դա, ընկերներ, ամենաարժեքավորն ե այն բոլորից, զոր տվել ե մեզ բոլշևիկան ազգային քաղաքականությունը:

Իսկ ԽՍՀՄ-ի ժողովուրդների բարեկամությունը մեծ և լուրջ նվաճում ե, զորովհետեւ քանի դեռ այդ բարեկամությունը կա, մեր յերկրի ժողովուրդները կիմնեն ազատ և անհաղթելի: Վոչ զոք մեր համար սարսափելի չե—վոչ ներքին և վոչ արտաքին թշնամիները, քանի զեռ այդ բարեկամությունը կա և ապրում ե: Կարող եք չկասկածել դրանում, ընկերներ:

(Բուռն ովացիա, բոլորը կանգնում են, բացականչություններ՝ ուրա Սառլինեն):

ՀՐ ԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆԻՑ

Այս գիրքը գրել են բամբակի ութ լավագույն վարպետներ, բամբակի դաշտերի ստախանովականները:

Նրանք բոլորն ել պարզեատրված են կառավարության կողմից բարձրագույն պարզեառվ—լենինի շքանշանով՝ բամբակի բերքը բարձրացնելու գործում ցույց տված աշխատանքային հերոսության և հաջողությունների համար:

Ովքե՞ր են դրանք: Համառոտ կերպով պատմենք գրանցից յուրաքանչյուրի կյանքի մասին:

Դ. Ֆայզուլլա Յունուսով—Ռուզեկստանի ԽՍՀ-ի Աքմալ-Աբադի շրջանի Ստալինի անվան կոլտնտեսության ողակավարներ:

Յունուսովը 62 տարեկան է: Ֆայզուլլա Յունուսովի հայրն ընդամենը մի հեկտար հող ուներ: Մինչև կոլտնտեսություն հիմնելն այդ հողի վրա աշխատում և ապրում ել ֆայզուլլան իր յերեք յեղբայրների հետ:

Այդ փոքրիկ հողակտորը չեր կարող կերակրել նրանց բուլորին, ուստի ֆայզուլլան ստիպված եր բատրակություն անել բայերի (բեկեր) մոտ:

Ֆայզուլլան կոլտնտեսություն մտավ 1929 թվին: Նա հայտնի յե կոլտնտեսությունում վորպես բամբակի մեծ վարպետ: Նա առանձնապես լավ գիտե, թե ինչպես պետք ե գործադրել պարարտանյութը, ինչպես պետք ե ինամել բամբակն ամառը և ինչպես ջրել այն: Իր հողակտորի վրա ֆայզուլլան ինքն ե կատարել վոռոգումը՝ չվստահելով այդ գործը հանձնել վորեա մեկին:

1935 թվին Ֆայզուլլա Յունուսովը, շնորհիլ գործը լավ հասկանալուն և իր ազնիվ աշխատանքին, հավաքել ե իր հողա-

տեղից 57 ցենտներ ամերիկական բամբակ և այսպիսով ցույց
ե տվել համաշխարհային ռեկորդ՝ բամբակի բերքատվության մեջ:

2. Տիգիբայ Միրզայեվ—Ռւզբեկստանի ԽՍՀ-ի Անդիշանի
շրջանի իշրամովի անվան կոլտնտեսության բերքատվության
խորհրդի նախագահ:

Միրզայեվը 42 տարեկան ե: Նրա հայրը յեղել է թեյատան
ծառա և բոլորովին չի ունեցել հող: Խնքը Տիգիբայը 16 տարեկան
հասակից սկսած բատրակություն ե արել բայերի մոտ
մինչև 1930 թվականը, Ծանր ե յեղել Միրզայեվի կյանքը և
իգուր չե նա դարձել կոլտնտեսություններ կազմակերպողներից
և նրանց համար մարտնչողներից մեկը, Աշխատելով կոլտնտեսության
մեջ, Միրզայեվը շարունակ մտածում եր, թե ինչպես
լավագույն կերպով բարձրացնի կոլեկտիվ տնտեսությունը,
ինչպես բարձրացնի բամբակի բերքատվությունը:

Նա կատարում եր զանազան փորձեր և բոլորը ճանաչում
ելին նրան վարպես փորձառու կոլտնտեսականի: Միրզայեվը ոգոնում ե վոչ թե մի, այլ շատ կոլտնտեսությունների՝ բերքատվությունը բարձրացնելու գործում:

Յերբ Տիգիբայ Միրզայեվը 1935 թվի գեկտեմբերի 19-ին
Ռւզբեկստանի, Կազակստանի և Կարաչալպակիայի առաջավոր
կոլտնտեսականների և կոլտնտեսուհիների՝ կուսակցության ու
կառավարության զեկավարների հետ ունեցած խորհրդակցությունում ճառ եր ասում՝ ընկեր Ստալինը բացականչում ե.
«Դա իսկական գյուղատնտես ե», իսկ ընկ. Վորոշիլովն ավելաց-
նում ե. «և աննման հոետոր ե», այնքան լավ և հմտալից եր
խոսում չայխանեյի նախկին ծառա Տիգիբայ Միրզայեվը: Ընկ.
Միրզայեվը վոչ միայն փորձեր և կատարում, այլև սովորում ե:
Նա 1933 թվին յերեք ամիս սովորել ե փորձարկու կոլտնտեսա-
կանների դասընթացներում և այժմ կանոնավոր կերպով կար-
դում ե լրագրեր, գրքեր և նույնիսկ իր սեփական գրադարանն,
ունի:

3. Շարիֆբարա Խումբայեվ—Ռւզբեկստանի ԽՍՀ-ի Բառումա-

նի շրջանի իշրամովի անվան կոլտնտեսության նախագահն ե:
Խամբայեվը 54 տարեկան ե, նա նախկին միջակ ե, առաջ
ունեցել ե 7 թանափ հող: Կոլտնտեսություն ե մտել 1930 թվին:
1932 թվին Խամբայեվին կոլտնտեսականներն ընտրում են կոլ-
տնտեսության նախագահ, վորպես լավագույն հարգածայնի, բամ-
բակի գերազանց վարպետի և կազմակերպողի: Յեզ ահա Շա-

րիֆբարա Խամբայեվը չոլորորդ տարին ե, վոր հիանալի կերպով
դեկավարում ե կոլտնտեսությունը, ձեռք ե բերել բամբակի
բարձր բերքատվություն և հասցրել ե իր կոլտնտեսության ան-
դամներին ունենոր կյանքի: Միմիայն կոլտնտեսության յեղիպ-
տական բամբակի ցանքսը յեղել ե 167 հեկտար տարածությամբ
մի հողամաս, վորի յուրաքանչյուր հեկտարից 1935 թվին կոլ-
տնտեսությունն ստացել ե 17 ցենտներ բամբակ:

4. Ողուլ Գուզել Բահրիդի Թուրքմենական ԽՍՀ-ի Բայրամ-
Ալի շրջանի «Բուլղակ» կոլտնտեսության ողակավարուհին ե:

Ողուլ Գուզելը 57 տարեկան ե: Առաջ նա չքավոր գեխկա-
նուհի յեր, կոլտնտեսություն ե մտել 1930 թվին: Մինչև այդ
նա պարապում եր գլխավորապես տնային տնտեսությամբ:

Կոլտնտեսության մեջ սկզբում նա շարքային կոլտնտե-
սուհի յեր, իսկ 1933 թվից աշխատում ե վորպես ողակավարուհի:

Ողուլ Գուզել Բահրիդը մի հիանալի որինակ ե, թե ինչ-
պես առաջներում կարիքից ու վշտից ընկճված կանայք միմիայն
կոլտնտեսության մեջ կարող են ծալվալել և հայտաբերել իրենց
ընդունակություններն ու տաղանդները:

Պառավ Բահրիդի ողակը լավագույնն ե Թուրքմենստանի
ողակների մեջ: 1935 թվին Ողուլ Գուզել Բահրիդի ողակը ավել
և բամբակի սեկորդային բերք՝ հեկտարից 50 ցենտներ:

5. Որազ Մամեդ Այդողդի Թուրքմենական ԽՍՀ-ի Ստա-
լինյան շրջանի «Դոբրովոլնիք» կոլտնտեսության բրիգադիր:

Այդողդին ընդամենը 24 տարեկան ե: Մինչև կոլտնտեսություն մտնելը յեղել ե չքավոր գեխկան: Կոլտնտեսությունում
աշխատում ե շատ լավ: Բրիգադիր գառնալուց հետո նա ամրուեն
համախմբել ե իր բրիգադը և հրաշալի կերպով կազմակերպել
նրա աշխատանքը: Մեծ հմտությամբ նա աճեցնում ե բամբակը:
1935 թվին նրա բրիգադը հեկտարից 25 ցենտներ յեղիպտական
բամբակ ե հավաքել:

6. Որա Խոջատիլի Թուրքմենական ԽՍՀ-ի Մերվի շրջանի
«Մոսկվա» կոլտնտեսության բրիգադիր:

Մինչև կոլտնտեսություն մտնելը Աթա Խոջաալին բատ-
րակ ե յեղել: Կոլտնտեսություն ե մտել 1929 թվին: 1932 թվին
նրան, վորպես բամբակի գործի հիանալի վարպետի, նշանակում
են բրիգադիր: Յեզ ահա չորրորդ տարին ե Աթա Խոջաալին ան-
հերթափոխ զեկավարում ե իր բրիգադը: 1932 թվին Աթա Խո-

ջամկին ընդունվում ե Համկոմկուսի (բ) անդամության թեկնածու:

Աթա Խոջաալին հիանալի կազմակերպող ե: Նա կարողացել ե ամբողջ բրիգադը համակել ենտուզիազմի կրակով:

Բամբակի մշակումը նա կատարում ե համաձայն ազրոտեխնիկայի բոլոր կանոնների: Դա հնարավորություն ե տվել նրան 1935 թվին հեկտարից 35 ցենտներ բամբակ ստանալու: Նրա հանձնած բամբակի 95 տոկոսն առաջնակարգ տեսակներից ե:

7. Զուրա Բոբոկալանով—Տաջիկստանի ԽՍՀ-ի Խոջենաի շրջանի «Սոցիալիզմ» կոլտնտեսության նախագահն ե:

Բորոկալանովը 40 տարեկան ե: Մինչև հեղափոխությունը հող չի ունեցել, իսկ հեղափոխությունից հետո մինչև կոլտնտեսություն մտնելն ունեցել ե 0,5 հեկտար հողաբաժին:

Կոլտնտեսություն ե մտել 1930 թվին: Բայերն ամեն ջանք գործ ելին դնում կոլտնտեսությունը քայլքայելու, կոլտնտեսության գործերը վատ ելին դնում: Զուրան կարողացավ մերկացնել բայերին, պայքարի հանել կոլտնտեսականների մեծամասնությանը կուլակների դեմ և վտարել նրանց կոլտնտեսությունից: 1931 թվին Զուրային ընտրում են կոլտնտեսության նախագահ և գործերն սկսում են ընթանալ ավելի լավ: Իսկ այժմ «Սոցիալիզմ» կոլտնտեսությունը լավագույններից մեկն ե Տաջիկստանի հանրապետության մեջ, 1935 թվին կոլտնտեսությունն ստացել ե բամբակի ոեկորզային բերք: Կոլտնտեսությունն իր ամբողջ ցանքային տարածությունից հավաքել ե 28-ական ցենտներ լեզվական բամբակ հեկտարից:

1931 թվին Զուրան ընդունվել ե Համկոմկուսի(բ) թեկնածու:

8. Դադաբայ Խոլմատով—Տաջիկստանի ԽՍՀ-ի Խոջենաի շրջանի Մոլոտովի անվան կոլտնտեսության նախագահն ե:

Խոլմատովը 44 տարեկան ե: Վաղ հասակից նա տքնել է կարիքի տակ: Հալքը մեռել ե, յերբ ինքը դեռ ևս փոքր յերեխա յեր, ուստի 8 տարեկան հասակից Դադաբայն ստիպված ե յեղել վարձու աշխատանք կատարելու: Խոլմատովը յերկու տարի աշխատել ե փոռում: Իր ամբողջ կյանքում նա բատրակություն ե արել և գտնվել կարիքի և նեղության մեջ: Յեզ յերբ 1929 թվին կազմակերպվեց կոլտնտեսությունը, Խոլմատովը մեկն եր առաջիններից, վոր մտավ կոլտնտեսություն: 1933 թվին Խոլմատովին ընտրում են կոլտնտեսության նախագահ՝

Վորակես գործի լավագույն գիտունի, վորակես կոլտնտեսային շինարարության ենտուզիաստի:

Խոլմատովի ղեկավարությամբ Մոլոտովի անվան կոլտնտեսությունը դարձել է չափազանց հարուստ՝ միլիոնատեր կոլտնտեսություն:

Այդ կոլտնտեսությունն առաջինն եր Տաջիկստանում, վորսկանց յանել յեզիպտական բամբակի համար յուրացնում եր սակավաբեր, քարքարոս հողերը: Բայց այդ հողերի վրա ել կոլտնտեսությունը 1935 թվին, 253 հեկտար ահագին տարածությունից, կարողացել ե հեկտարից միջին հաշվով 20-ական ցենտներ լեզվական բամբակ ստանալ: Ընկ. Խոլմատովը 1932 թվից Համկոմկուսի անդամ ե:

ՀԵՂԻՆԱԿ'ՍԵՐԻՑ

Ուղբեկստանի կոմունիստական կուսակցության (բոլշևիկների) կենտրոնական կոմիտեյի քարտուղար ընկ. Ակմալիկը ամովը Ուղբեկստանի, Կաղակստանի և Կարա-Կալակիայի առաջավոր կոլտնտեսականների և կոլտնտեսութիների, կուսակցության ու կառավարության ղեկավարների խորհրդակցությանը 1935 թվականի դեկտեմբերի 19-ին արտասանած իր ճառի մեջ ասել ե.

«Մեզանում բամբակագործության դիտությունը յետ և մուռ, ուստի բարձր բերքի այդ վարպետներն ահազին ոգնություն են ցույց տալիս բամբակագործության հետագա զարգացման գործին վոչ միայն իրենց գործնական աշխատանքով, այլև իրենց պատմություններով այդ աշխատանքի մասին։ Այդ մարդիկ միայն գործնական աշխատավորներ չեն։ Նրանք մեծ ավանդ են մացնում նաև բամբակագործության դիտության մեջ»։

Այս գիրքը մենք գրել ենք, վորպեսզի ծանոթացնենք բոլոր կոլտնտեսականներին ամերիկական և յեգիպտական բամբակի բարձր բերք ստանալու համար մեր պայքարի փորձերին։

Բայց մենք ուղղակի ասում ենք, վոր մեր ստացած բամբակի բարձր բերքը գեռ շատ հեռու յեն վերջնական համարվելուց։

Կարելի յետանալ ավելի բարձր բերք, քան մենք ստացել ենք 1935 թվին։ Դրան մենք պետք են ձգտենք 1936 թվին։

Այս գիրքը գրելիս մեզ ոզնել են՝ Գյուղհրատի բուսաբուծության խմբգրության ղեկավար ընկ. Ս. Դատովսկին, ԽՍՀՄ-ի Հողմուկոմատի բամբակի գլխավոր վարչության գյուղատնտես ընկ. Ս. Ֆ. Մակարովը և շքանշանակիրներ՝ Ակ Մամեդ

Մարիեվը (Թուրքմենստանի ԽՍՀ-ի Կազանովիչի շրջանի հողբաժնի ավագ գյուղատնտես) և Արգուլա Խրաչեվը (Տաջիկստանի ԽՍՀ-ի Կազանովիչաբադի շրջանի Կալինինի անվան ՄՏԿ-ի գյուղատնտես)։

Այս բոլոր ընկերներին հայտնում ենք մեր անկեղծ շնորհակալությունը։

ՄԵՐ ՀԱԶՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՊԱՏՃԱՌՆԵՐԸ

Ենք բոլորս 1935 թվին բամբակի մի այնպիսի բերք ենք աճեցրել, վոր մեզանից վոչ վոք առաջ չի աճեցրել։ Մեր դաշտերի բամբակի բերքատվությունն իսկապես ուեկորդալին բերքատվություն ե։

Այդ հաջողությունները մենք ձեռք ենք բերել վոչ թե այն պատճառով, վոր 1935 թվին յեղել են առանձնապես բարենպատ կլիմայական պայմաններ։ Մեր պատճից դուք կտեսնեք, վոր բամբակի բարձր բերքատվությունը հեշտությամբ չենք ձեռք բերել։ Ստիպված ենք յեղել կովելու ջրի պակասության, կիզիչ քամիների, մոլախոտերի և բամբակի բարձր բերքն արգելող այլ խոչընդոտների դեմ։ Մենք հաղթահարել ենք բոլոր այդ խոչընդոտները։ Յեկ այժմ մենք հարց ենք տալիս մեղ՝ մվ և սովորեցրել մեզ ալսպես աշխատել, մվ և վոգեորել մեզ պայքարի ցեղներու բամբակի ուեկորդային բերք ստանալու համար։ Մեզ սովորեցրել ե այսպես աշխատել, մեզ վոգեորել ե մեր աշխատանքի մեջ մեր հայրը, մեր ուսուցիչը, կուսակցության և բոլոր աշխատավորների մեծ և իմաստուն զեկավար հոսիք Վիսարիոնովիչ Ստալինը։

Այդ նա յե ասել, թե «բանվորները և գյուղացիները, վոր առանց աղմուկի և շրիկոցի շինուամ են գործարաններ և ֆաբրիկներ, հանքահորեր և յերկաթուղիներ, կոլտնտեսություններ և խորհուտեսություններ, ստեղծում են կյանքի բոլոր բարիքները, կերակում և հաղցնում են ամբողջ աշխարհը—ահա թե ովքեր են իսկական հերոսները և նոր կյանք ստեղծողները։

Մեր զեկավարի այդ խոսքերը մեխիել են մեր հոգու մեջ։ Կոլտնտեսային կյանքի ստալինյան կանոնագրությունը, վորի յուրաքանչյուր խոսքը մենք ուսումնասիրել ենք, համա-

կել և մեզ խանդավառության կրակով, վորովհետեւ մենք հասկացել ենք, վոր մեր մեծ հայրը և ուսուցիչը, մեր կուսակցությունն ու կառավարությունը միայն մի հոգա ունեն—դա մեզ՝ աշխատավորներին համար լավ, յերջանիկ կյանք ստեղծելու մեծ հոգան ե։

Կուսակցության և կառավարության 1935 թվականի մարտի 1-ի վորոշումը՝ բամբակի հանձնման պլանների գերակատարման համար պարզեցավելու դրդ մացնելու մասին՝ մեզ համար մի նոր զորեղ խթան հանդիսացավ։ Դա ցուց տվեց մեզ և բոլոր կոլտնտեսականներին, թե ինչքան բարձր են գնահատում մեր աշխատանքը կուսակցությունը և կառավարությունը։

Մեր մեծ, մեզ բոլորիս համար թանգագին ընկեր Ստալինը պահանջում է մեզանից ավելի շատ բամբակի, վոր հարկագոր և մեր արդյունաբերությանը, վոր հարկավոր և վոչ թե հարուստների հագուստի համար, այլ նրա համար, վոր միլիոնավոր բանվորներ և կոլտնտեսականներ ստանան գործվածքներ։

Մենք խոստացել ենք այնպիս աշխատել, վոր արդարացնենք խորհրդային իշխանության վստահությունը, վորն ազատել և մեզ յարական և բալական ձնշումից, վորը տվել և մեզ կոլտնտեսական յերջանիկ կյանքը։

Մենք մեր խոստումը կատարել ենք։

Յեկ մեր աշխատանքի համար մենք արժանացանք մեծ պատվի՝ դեկուցել կուսակցության և կառավարության դեկավարներին, զեկուցել կոլտնտեսությունների հորը, իմաստուններից իմաստունին՝ մեծ Ստալինին—մեր հաջողությունների մասին։

Մեր համեստ աշխատանքի համար բանվորների և գլուզացիների մեր կառավառությունը պարզեցատրեց մեզ ամենամեծ պարզեցված լինինի շքանշանով։

Մեզ՝ հեռավոր Ռւզբեկստանի, Տաջիկստանի և Թուրքմենստանի համեստ աշխատավորներիս խորհրդային իշխանությունը փառարանել և ամբողջ աշխարհում։

Մենք յերեք չենք մոռանա, յերեք չեն մոռանա մեր հանրապետությունների աշխատավորներն այն մեծ պարզեց, վորին արժանացել ենք, կոլտնտեսականներս, կոլտնտեսության մեջ կատարած մեր աղնիվ աշխատանքի համար։

Ի՞նչպես ենք մենք ձեռք բերել բարձր բերքերը։ Կարմաղ և արդյոք ամեն մի կոլտնտեսություն նույն բերքերն ունենալ։

Մի պատասխան միայն կարելի յե տալ այդ հարցին: Ամեն մի կոլտնտեսություն կարող ե տալ ամերիկական և յեզիպտական բամբակի այնպիսի բարձր բերք, ինչպիսին մենք ենք ձեռք բերել, և տալ մեր մեծ հայրենիքին յերկու, յերեք անգամ ավելի բամբակ, քան այժմ:

Մեր հողը նույնն ե, ինչ վոր մյուս կոլտնտեսություններինը: Մենք ունենք շատ բերբի հողեր, ունենք ավազոտ հողեր, ունենք նաև բարքարոտ հողեր:

Մեր կոլտնտեսություններում այնքան ջուր կա, ինչքան կա և մյուս տեղերում:

Խորհրդային իշխանությունը մեզ տվել ե այնքան տրակտորներ և մեքենաներ, վորքան և մյուս կոլտնտեսություններին:

Պարարտանյութեր մենք ստացել ենք ուրիշ կոլտնտեսություններին հավասար չափով:

Բանվորական և քաշող ուժով և ինվենտարով մենք ավելի հարուստ չենք, քան մնացած կոլտնտեսությունները:

Մենք ապրում և աշխատում ենք նույնպիսի սովորական կոլտնտեսություններում, ինչքես և մեր հանրապետությունների բոլոր կոլտնտեսականները:

Խորհրդային իշխանությունը տվել ե մեզ տրակտորներ և մեքենաներ, տվել ե մեզ կոլեկտիվ աշխատանքի հղորությունը, վորոնց առաջ չկա և չի կարող լինել վոչ մի խոչընդու:

Հարցն այն ե, վոր լիովին և լայնորեն ոգտագործենք այս բոլոր հնարավորությունները, վոր տնտեսաբար հոգանք ամեն մի մանրունքի մասին:

Վերցնենք պարարտանյութերը: Ինչու շատ կոլտնտեսություններում իգուր կորչում են հին ծածկասայլերը, դուվալները, ամեն տեսակ աղբերը, կղկղանքային թափոնքները: Մեր աշխատանքի որինակով մենք ցուց ենք տվել, վոր դրանք մեծ հարստություն են: Ամբողջ ժամանակ մենք հավաքում ենք կոլտնտեսություններում զանազան թափոնքները, ըստ հնարավորության բերում ենք նաև քաղաքից և ապա, վորպես հիմանի պարարտանյութ, հազարավոր փթերով թափում ենք մեր դաշտերում: Կարծի են արդյոք նույնն անել մեր հանրապետությունների բոլոր կոլտնտեսություններն առանց բացառության: Կարող են և պարտավոր են անելու այդ:

Մենք կատարել ենք աշնան հերկ, ձմեռվա վոռոգումն և գարնանային լավ մշակում: Սյու ամենը պահանջում և մեծ աշխատանք, պահանջում և շատ քաշող ուժ:

Բայց միթե խորհրդային իշխանությունը քիչ ե տրակտորներ տվել և տալիս ե մեզ: Զե վոր այժմ մեր հանրապետություններում չեք գտնի մի շրջան, վորտեղ չկինի մի կամ յերեկու մեքենատարակտորային կայան: Յեվ միթե մարդկանց պահասությունն ենք զգում մենք:

Հարկավոր ե միայն ցանկություն և շնորհք ունենալ մեր կոլտնտեսականներին կազմակերպելու համար: Հորկավոր ե միայն կարողանալ շահավետ կերպով ոգտագործել այն ահագին ոգնությունը, վոր ցուց ե տալիս մեր պետությունը մեզ: Յեվ այն ժամանակ յուրաքանչյուր կոլտնտեսություն կիարողանա հողը հերկել վոչ թե մի կամ յերկու, այլ ավելի շատ անգամ, ջրել հողն ինչքան հարկավոր ե և այդ աշխատանքից այնպիսի բերք ստանալ, վորի մասին անհատական տնտեսությունները յերազել անգամ չեն կարող:

ՊԵՏՔ Ե ՃԱՆԱՋԵԼ ԲԱՄԲԱԿԸ

Բամբակի մասին անում են, վոր նա արեի զավակն ե, վորովեատ նա սիրում և շատ ջերմություն, շատ լուս:

Բայց ավելի ճիշտ կլինի ասել, վոր բամբակը վոչ միայն արեգակի, այլև ջրի զավակն ե: Դա առանձնապես ճիշտ ե ասել մեր վոռոգվող շրջանների մասին, վորտեղ բամբակը մեծ չափով խոնավություն և պահանջում:

Բայց բարձր ջերմությունն ու խոնավությունը բավական չեն բամբակի բարձր բերք ստանալու համար: Անհրաժեշտ ե նաև ապահովել բամբակը սննդանյութերի մեծ քանակությամբ:

Այդ բոլորը քաջ հայտնի յեն յուրաքանչյուր բամբակագործի, բայց բոլորը չեն, վոր աշխատում են այնպես, վորպեսզի ապահովեն բամբակը խոնավությամբ, սննդանյութերով և ջերմությամբ:

Բնությունը մեր կողմերում հարուստ ե արեի լուսով և ջերմությամբ, բայց և արեն ել պետք և ոգտագործել հմտորեն:

Ամենից առաջ պետք ե ընտրել ցանքի ճիշտ ժամանակը: Ուշ ցանելուց բամբակը կղրկի ամենալավ ժամանակից, կկորցընի խոնավությունն ու ջերմությունը, ուշ կհասունանա և վատ բերք կստացվի:

Խիստ վաղ ցանելուց բամբակը յերկար ժամանակ չի ծլի

և նույնիսկ նրա սերմերը դեռ չծլած կարող են վոչնչանաբ ցուրտ հողի մեջ:

Ցանքի ճիշտ ժամանակը վորոշելու համար հարկավոր և լավ ճանաչել բամբակը, ծանոթ լինել իր վրջանի կլիմային, իմանալ իր դաշտի տուրաքանչյուր հողամասը:

Բայց լինում ե նաև այնպես, վոր ցանքսի ժամանակը ճիշտ ե ընարված, ժամկետն արգեն հասել ե, բայց ցանքսն այնուամենայնիվ դեռ չեն սկսում: Ինչո՞ւ: Շատ հասարակ պատճառով: Դաշտերը դեռ ևս պատրաստ չեն ցանքսի համար:

Բամբակը սիրում ե լավ մշակված հող:

Միայն այն դեպքում, յերբ հողը հերկված ե աշնանից, լավ պարարտացրած, խոնավացրած գարնանը մի քանի անգամ, հերկված և փոցխված, միայն այդ դեպքում կարելի յի ասել, վոր հողը նախապատրաստված ե ցանքսի համար:

Այդ բոլոր աշխատանքները պետք ե կատարել ժամանակին: Վոչ այն ժամանակ, յերբ հասել ե ցանելու ըուպեն, այէ դրանից շատ առաջ, դեռ ևս աշնանից, ձմեռվանից և վաղ գարնանից:

Հարկավոր ե հերկել հողն առանց խորդուրորդությունների, հավասար և լիակատար խորությամբ ամբողջ հողամասի համար: Վոչինչ չարժե այն աշխատանքը, յերբ մի տեղ հողը հերկված ե 20 սանտիմետր խորությամբ, իսկ մի այլ տեղ՝ 14 սանտիմետր:

Այնպիս պետք ե փոցխել, վոր դաշտում չմիան հողակոշտեր, մեծ գնդեր, վոր դաշտը լավ շերտառված լինի: Յերբ հերկումն ու փոցխումը կատարված են ժամանակին ու բարեխզնորեն, այն ժամանակ կարող ենք ասել, վոր հողամասը պատրաստ ե ցանքսի համար և հարկավոր ե միայն սպասել բարեհաջող յեղանակի՝ արագորեն ցանելու համար:

Հենց ինքը՝ ցանքսը պահանջում ե մեծ հմտություն: Հարկավոր ե ցանել ընտիր, ստուգված սերմեր:

Անպայման պետք ե ցանել շարքացաններով և հետեւ ցանքի համաշախությանը, այսինքն՝ վոր նրա խորությունն ու խոռությունը լինեն միատեսակ, միատեսակ լինի շարքամիջերի լայնությունը: Այսպիսի ցանքսն զգալի չափով թեթեացնում ե բամբակի խնամքի բոլոր աշխատանքները: Իսկ բամբակի խնամքը ցանքսից հետո ամենապատասխանատու և լարված աշխատանք ե այն պայքարի մեջ, վոր տարվում ե բամբակի համար սնընդանյութեր, խոնավություն և ջերմություն ապահովելու գործում:

Ամենագլխավորը՝ բամբակի դաշտերում չպետք ե թողնել մոլախոտեր: Մոլախոտերն ավելի կենսունակ են, քան բամբակը, նրանցից շատերի արմատներն ավելի ուժեղ են, քան բամբակինը: Յեկ յեթե մենք բամբակը թողնենք առանց հսկողության և կամ թույլ ոգնություն ցույց տանք նրան՝ քիչ փիրեցում կատարենք, այդ գեղգում բամբակի բերք չենք ունենա:

Մոլախոտերը սուվեր են ցցում բամբակի վրա և զրկում նրան արեն ճառագայթները լիովին վայելելու հնարավորությունից: Մոլախոտերը խլում են բամբակին անհրաժեշտ սննդանութերը և խոնավությունը:

Մոլախոտերին հաղթելու համար հարկավոր ե անմիջապես սկսել հողի մշակումը հենց վոր նա կչորանա ջրելուց հետո, կամ, ինչպես ասում են, կհասունանա:

Այդ գործում վոչ մի աշխատանք չպետք ե խնայել: Մենք կատարել ենք վեց, յոթ և նույնիսկ ութ փիրեցում, չորսական, հնդական և նույնիսկ վեցական կուլտիվացիա: Մենք ապահովել ենք բամբակն այնպիսի խնամքով; վորպիսին հարկավոր ե նրան՝ հողամասի բոլոր պայմանների համեմատ: Ամբողջ դաշտը փիրեցրել ենք առանց անհարթությունների և բացթողումների՝ լիակատար ե հավասար խորությամբ:

Շատ հաճախ մեր կոլտնտեսությունները վատ բերք են ստանում, վորպիսեն վատ են վոռոգում, չեն կարողանում կանոնավոր կերպով ողտագործել թանգարին խոնավությունը և հետո ասում են, թե ջուրը չբավականացավ:

Քիչ չեն լինում և այնպիսի գեղքեր, յերբ ջուրը բաց են թողնում մոլախոտերով ծածկված դաշտերի վրա, վորտեղ խոր փիրութն չի կատարված: Ի՞նչ ոգուտ կարող ե տալ այդպիսի վոռոգումը: Զուրը լավ չի ծծվում հողի մեջ, իսկ խոնավությունը խլում են բամբակից մոլախոտերը: Հետեւարար, հողը վառոգելուց առաջ պետք ե նախապատրաստել ինչպես հարկն ե, խորը փիրել և անպատճառ մաքրել մոլախոտերից:

Յերեմին վոռոգելու ժամանակ ջուրը բաց են թողնում այնպիսի ուժեղ հոսանքով, վոր նա վոռոգում ե հողը և վլցնում առուները: Այսպիս ջրել չի կարելի:

Զբելու ժամանակ կարենոր ե, վոր ամբողջ հողամասը թրջվի համաշափորեն, վոր ջուրն անցնի լուրաքանչյուր ակոսի մեջ:

Վոչ թե արագ հոսանքով, ինչպես լեռնային գետակ, այլ դանա-
դաղ և համաշափ կերպով ընդգրկի ամբողջ հողամասը:

Մի քանի կոլտնտեսություններում չեն կարողանում
անտեսել ջուրը: Այնքան անշնորհք են ջրում, վոր ջուրը հեղե-
ղում և ճանապարհները և զատարկ տարածությունները:

Ավելի վատ ե, յերբ ջրում են չափից դուրս, և ջուրը բաց
են թողնում այնքան շատ, վոր հողն աղոտվում ե:

Վոռոգումը պետք ե կատարել ամենայն խնամքով: Պետք
ե կարողանալ փորդել բամբակը վոռոգելու ձիշտ ժամանակը:
Չի կարելի թույլ տալ վոր բամբակը ծարավությունից թառա-
մի, բայց հարկավոր չենակ ջրել այն ժամանակ, յերբ այդ պար-
զապես պետք չեն նրան:

Ահա թե ինչու համար ենք ասում մենք, վոր պետք և ճա-
նաչել բամբակը: Շատ բամբակաբուծներ ասում են՝ «տանյակ
տարիներ մենք աշխատում ենք բամբակի վրա, մենք լավ ենք
ճանաչում բամբակը»: Բայց յեթե փորձառությանն ավելացնենք
նաև գիտությունը, այն ժամանակ գործն անշուշտ ավելի լավ
կլնա:

Ահա թե ինչու մենք խորհուրդ ենք տալիս բոլոր կոլտըն-
տեսականներին հրացները չդնել միայն իրենց փորձառության
վրա, այլ սովորել և ավելի հաճախ խորհուրդ հարցնել գլուղատն-
տեսներից՝ բամբակի բուլսի կյանքի և նրա պահանջների մասին:

Բարձր բերք ստանալու գործում ահագին ոգնություն կա-
րող ե ցույց տալ առաջավոր կոլտնտեսությունների փորձը, բարձր
բերքի վարպետների փորձը:

Մենք ինքներս ուշադրությամբ հետեւում ենք, թե ինչպես
են աշխատում մեր կոլտնտեսություններն ու կոլտնտեսակա-
կանները, սովորում ենք նրանցից և ոգտագործում նրանց փորձը
մեր աշխատանքում:

Բանն այն չե միայն, թե ինչքան պարարտանյութ պետք
եմտցնել հողը, այլև այն՝ թե ինչպես և յերբ և հարկավոր մըտ-
ցընել: Խնդիրն այն չե միայն, թե քանի վար և կատարված:
Աշխատանքի վորակն ե վճռում գործը: Ի՞նչպես ե կատարված
էրկը, ի՞նչ խորությամբ ե վարած հողը, անհարթություններ
չկմն արդյոք, հերկված են անկյունները թե վոչ, արդյոք համբ
և հերկված ամբողջ դաշտը և այլն:

Ահա թե ինչն ե վճռում գործը: Նույնը և բոլոր աշխա-
տանքների մեջ,

Ընկ. Տիշբրալ Միրզայեվը կուսակցության և կառավարու-
թյան ղեկավարների հետ ունեցած խորհրդակցության ժամա-
նակ ասել և հետեւյալ ձշմարիտ խոսքերը.

«Ընկերներ, յես ձեր ուշադրությունը դարձնում եմ նաև
այն բանի վրա, վոր բույնը բողը և ծիլ տալուց հետո ել
մինչեւ բուկ տալու վերջը խոսում ե մարդու հետ: Յուրաքան-
չյուր թուփ, յերբ նրա մոտով անցնում ես, խնդրում ե՝ «Փլավ
տուք ինձ, թեյ տուր ինձ»: Փլավը դա պարարտանյալին ե, իսկ
թեյը՝ ժամանակին ջրելը: Յեկ ահա յես սոսկ չեյի ջրում և
պարարտանյութ տալիս հավասար չափով բոլոր հողամասերին:
Յես շրջում եյի և ընտրում, թե վորտեղ և ինչքան պետք ե
տալ: Այսպիսով յես այնպիսի խնամք ապահովեցի բամբակին,
վոր իմ յերկու ցանքսաղաղտերում տարբեր բույսերը միատե-
սակ դարձան, և հեկտարից 35 ցենտներ բամբակ տվեցին»:

Ահա այսպես պետք ե աշխատենք մենք բոլորը մեր հրա-
շալի հայրենիքի բոլոր կոլտնտեսականներու Մենք բոլորս սի-
րով պետք ե խնամենք մի թուփը, և այն ժամանակ մեր
խորհրդային յերկրում ավելի շատ բամբակ կլինի, քան մի
վորես ուրիշ տեղ աշխատակիս յերեսին:

Ս.ՇԽԱԾԱՆՔՆ ԱՇԽԱՑԻՆ-ԶՄԵՌԱՑԻՆ ՇՐՋԱՆՈՒՄ

Բամբակի բերքահավաքից հետո անմիջապես և սովորաբար
վոչ ուշ նորիմբեր ամսսից մենք սկսում ենք քաղել գուզավա-
յերը (բամբակի ցողունները):

Գուզավայի բաղում ենք արմատից, վորպեսդի կանխենք
ապագա ցանքսերը հին արմատների միջոցով հիվանդություն-
ներից վարակվելուց:

Բացի գրանից, գուզավայի հարկավոր և արմատից քաղել
այն պատճառով, վոր նրանք չխանգարեն վարի ժամանակ: Գու-
զավայի քաղելու հետ միաժամանակ մենք վոչնչացնում ենք
մոլախոտերը չիւերի և առուների վրա:

Գուզավայի քաղելուց հետո մենք սկսում ենք աշնան վա-
րը: Սովորաբար աշնան վարը մենք կատարում ենք մի անգամ:
Ֆալզուլա Յունուսովը (վոր ստացել ե 57 ցենտներ բերք) իր
հողամասում կատարել ե կրկնակի աշնանավար. առաջին վարը
նաև կատարել ե ձիաքարը «ԿԱ» գութանով 15 սանտիմետր խո-

բությամբ, իսկ իերկրորդ վարը կատարել և տրախուրային գութանով 20 սահմանադրությամբ։ Յերբեմն զուզափայի քաղը հեշտացնելու համար նրա տակը հերկում են ձիաքարշ գութանով։ Բայց այդ հերկը լիարժեք չի, զրա համար ել տակը հերկելուց հետո մենք անպատճառ կատարում ենք իակական խոր հերկ։ Աշնանավարը մենք չենք փոցիում մինչև գարուն։ Այդ դրության մեջ հողը շատ խոնավություն և ամբարում։ Աշնանավարից հետո մենք լվացել ենք աղոտված հողերը։ Զմեսվա վոռոգումը պետք ե կատարել վոչ միայն աղոտված հողերի, ալև չաղոտված կավախառն և կավազաղախառն հողերի վրա, վարովինետև այդ հողերն ընդունակ են պահպանելու խոնավությունը մինչև ցանքսի սկիզբը։ Իսկ ավազախառն և քարքարոտ հողերը չպետք ե ջրել, վորովինետև նրանց մեջ խոնավությունը մինչև գարուն չի մնում։

Իսկ էթե աղոտված հողերը չվողողենք-չվանանք, անխուսակելի կերպով ավելի և կաղումին և դրա հետևանքը կլինի բերքատվության հսկայական նվազումը և նույնիսկ բերքի վորչնչացումն այդ հողերի վրա։

Զմեռվա վոռոգումը մեծ ոգուտներ և տալիս։ Զմեռվա, ինչ-պես նաև վաղ գարնանային վոռոգումների և ալվա դաշտերի կանոնավոր խնամքի դեպքում հողը ցանքի ժամանակ ունենում և խոնավության բավարար պաշար։ Ուրեմն մենք կարող ենք գարնանը ցանքսն սկսել վոչ թե այն ժամանակ, յերբ ջուր կա (իսկ հաճախ և պատահում, վոր գարնանը ջուրը լիովին չի բավարարում), այլ յերբ յեղանակը հարմար և ցանքսի համար։ Այսպիսով մենք կատարյալ հանրավորություն ունենք ընտրելու բամբակենին ցանելու ամենահաջող ժամանակը։

«Սոցիալիզմ» կոլտնտեսության մեջ վորտեղ աշխատում և ջուրա բորոկալանովը, ձմեռային վոռոգումը կատարել են այս լեզանակով։ Թաշել են խիստ մանր ակոսներ և նրանց մեջ բաց թողել ջրի փոքրիկ հոսանք։ Վոռոգման ժամանակ ջուրը մի հողամասից տաքածվում է հարեւան-մրուս հողամասը։ Զրի պակասության պատճառով «Սոցիալիզմ» կոլտնտեսության մեջ 1934/35 թվի ձմեռը վոռոգումը կատարել են միայն մի անգամ։

Ֆայզուլլա Յունուսովը յերկու վոռոգում և կատարել ձմեռվա մեջ։ Նա կարծում է, վոր ձմեռվա վոռոգումը լավ և նաև այն տեսակետից, վոր հեշտացնում է պայքարը մոլախոտերի գեմ, վորովինետև սառը ջուրը սառցնում է մոլախոտերը։ Մեր վոռոգման ցանցը միշտ պահում ենք կատարելապես

կարգին վիճակում։ Հաճախ մաքրում ենք, ամբողջ ժամանակ հսկում ենք վրան և հարկավոր զեպքում կատարում ենք անհրաժեշտ նորոգությունը։ Վոռոգման ցանցի մաքրումն սկսում ենք աշնանից և սովորաբար վաղ գարնանը ցանցն արդեն մարդկանց և լինում։

Ինչպիսի պարագաներեր ենք մենք հաղը տօնանիր։ Դա շատ մեծ և կարել հարց ե։ Գիտությունը մինչև այժմ գեր ևս պարզ պատասխան չի տվել այդ հարցին։ Յերբ, ինչպիսի հողերի վրա և բնաջրան պարարտանյութ պետք ե լցնել։ Այդ հարցին գյուղատնտեսները միշտ պատասխանել են, թե հարցը գեր ևս լիովին պարզ չի։ Մեղ ասել են, թե աշնանը պարարտանյութեր մացնելը յեթե վասակար ել չե, համենայն զեպս անոգուտ ե։ Իսկ մենք փորձով համոզվել ենք, վոր աշնանը դաշտերը պարարտանյութեր տանելն անհրաժեշտ ե՝ բամբակի բարձը բերք ստանալու համար։

Եեթե մենք աշնանը հողերը չմացնելինք աղը, հանքային, այլև տեղական զանազան պարարտանյութեր, մենք չելինք կարող բարձր բերք ստանալու համար։

Բառումանի շրջանի իկրամովի անվան կոլտնտեսությունում, վորտեղ աշխատում և Շարիֆբարան, հեկտարին մտցրել են 1040 կիլոգրամ հանքային պարարտանյութեր, վորից 400 կիլոգրամ ամոնիումի ծծմբատ և 640 կիլոգրամ ֆոսֆորային պարարտանյութեր։ Հանքալին պարարտանյութերը հողն են մտցրել աշնան տրակտորային վարից առաջ։ Իսկ գոմազը մըտցըրել են ի նկատի առնելով, թե վորչափ լավ են պարարտացած յեղել հողերը առաջ, անցյալ տարի։

1934 թվի աշնանն այդ կոլտնտեսության մեջ գոմազը պարարտացրել են 9 հեկտար ավազախառն հող, բարձր տեղերից բերած հողով (հեկտարին 500—600 սալլ) 5 հեկտար և հանքային պարարտանյութերով 31 հեկտար։ Մնացած 59 հեկտար հողը պարարտացնելու կարիք չի յեղել, վորովինետև լավ պարարտացված ե յեղել 1933 թվին։

Առնասարակ միշտ պետք ե հիշել, վոր պարարտանյութերը հարկավոր և գործադրել հմտությամբ։ Նայած հողին, պարարտանյութերը մտցնելու ժամանակին, նայած այն բանին, թե ինչպիսի ի ինչով և պարարտացվել հողը նախկին տարիներում,

պետք և վճռել, թե ինչքան և ինչպիսի պարարտանյութեր պետք է մտցնել:

Որինակ՝ «Սոցիալիզմ» կոլտնտեսության մեջ Բոբոկալանովս աշնանը բերրի հողերն ե մացրել միայն տեղական պարարտանյութեր հեկտարին 3000 գութ, իսկ նվազ բերրի, քարքարուս հողերին, բացի տեղական պարարտանյութերից, մտցրել ե նաև հանքային պարարտանյութեր:

Ճիշտ ե, շատ գյուղատնտեսների կարծիքով աշնանից քարքարուս և ավազուտ հողերի մեջ հարկավոր չե թափել հանքային պարարտանյութերը, վորովինուս անձեռները նրանց կքշեն գետաքարերի մեջ և այդպիսով նրանք կլորչեն:

Բայց ընկ. Զուրա Քորկալանովն այսպես ե անում: Նո հանքային և տեղական պարարտանյութերը խառնում ե իրավ և հերկում-մտցնում քարքարուս հողի մեջ: Ձմեռը և աշնանը այդ հողի վրա նա ջուր չի ժողնում, իսկ քանի վոր տեղում-ները քիչ են, յերկուուշ չկա, վոր պարարտանյութերը կտարրալուծվեն: Ցանքից առաջ այդ հողերը ջրում են ակոսիկների միջոցով և վոռովման այդ ձեռի շնորհիվ պարարտանյութերը չեն քշվում-տարվում և չեն տարրալուծվում:

Իսկ ընկ. Ռուզել Գուրգելի Թահբիդը («Բոլշեկիլ» կոլտնտեսության ողակավար), վոր մի հեկտարից ստացել ե 50 ցենտներ բամբակ, գուշա-փայլ քաղելուց հետո անմիջապես ցրել ե հանքային պարարտանյութերը և ապա հերկել-ծածկել ե ձիաքարչ գութանով: Յերկու հետք զիգզագաձև փոցիսելուց հետո նա նորից լցրել ե իր գաշտերի վրա հեկտարին 500—600 սալլ գոմազք և տեղական պարարտանյութերը Գոմազքը ցրվել ե ամբողջ գեկտեմբեր և հունվար ամիսների ընթացքում և հարթվել-հերկվել-ծածկել: Գարնանը նա կատարել ե յերկու հերկ և յուրաքանչյուր անգամ փոցիսել: Պարարտանյութերը մտցնելու այդ ձեռ, ինչպես տեսնում ենք, վատ չե թեկուզ այն պատճառով, վոր Ռուզել Գուրգելը հեկտարից ստացել ե 50 ցենտներ բամբակ:

Արա Խոջաղին («Մոսկվա» կոլտնտեսության բրիգադիրը), վոր ստացել ե հեկտարից 36 ցենտներ բամբակ, հետևյալ ձեռվ և մտցրել պարարտանյութերը: Գուրգա փայլը քաղելուց հետո նա բոլոր ժամանակ կրելով գոմազքը լցրել ե գաշտերը և հերկելով ծածկել այն: Վորոշ տեղերում նա պարարտացնում եր նաև հերկումից հետո: Յեթե գոմազքը չեր բավականանում, այդ դեպքում նա պարարտացնում եր գուրգա և բարձր տեղերից բե-

րած հողով: Այս տարի Աթա Խոջան պարարտացը ել է 15 հեկտար հող գոմազքով, գործադրելով հեկտարին 300—500 սալլ և 14 հեկտար՝ տեղական պարարտանյութերով, լցնելով հեկտարին 500 սալլ պարարտանյութ: Աթա Խոջան հանքային պարարտանյութեր աշնանից չի մտցրել:

Այսպիս ենք մենք աշխատել ձմեռը: Մենք ոգտվել ենք յուրաքանչյուր լավ որից, վոր ձմեռն աշխատենք դաշտում, վորովինուս գործ շատ կար: Հարկավոր եր յերել պարարտանյութերը, կտարել աշնանավարը, մաքրել աղոսկած հողերը, կտարել ձմեռվա վոստումը, մաքրել առուները և այլն:

Բամբակի բարձր բերքը յերկնքից չի ընկնում մեր ձեռքը: Նա նվաճմում ե համառ պայքարով և ագրոտեխնիկայի կառունակոր կիրառումով:

ԱՇԽԱՏԱՆՔԸ ԳԱՐՆԱՆ ՇՐՋԱՆՈՒՄ

Վաղ գարնան, հենց վոր կարելի յե դաշտ դուրս գալ, մենք փոցիսում ենք աշնանավարը: Յերկաթյա փոցիսով զիգզակ չարդում ենք հողակոշաերը և գնդերը և փխրում ենք հողի վերնաշերտը: Աշնանավարի գարնանային փոցիսումն այն արգունքն ե ունենում, վոր հողի մեջ ավելի լավ և պահպանվում ձմեռվա ընթացքում նրա մեջ ամբարված խոնավությունը:

Գարնանային փոցիսումից հետո մինչև ընդհուպ ցանքսաժամանակը մենք մի անգամ հերկել ենք հողը: Մի քանի գյուղատնտեսներ կարծում են, թե գալնանը ցանքսից անմիջապես առաջ հարկավոր ե միայն կտարել մի թեթև հերկ՝ 12—15 սանտիմետր խորությամբ, և այդքանը բավական ե արգեն: Նրանք լենթադրում են նույնիսկ, վոր կրկնակի վերահերկումն առաջ կրերի հողի պնդացում և փոշիացում (գիտականորեն ասած՝ հողի կառուցվածքի քայլայում):

Իսկ մենք համոզվել ենք մեր սեփական փորձերով, վոր մեր վոստով հողերի վերաբերմամբ այս տեսակ խորհուրդները ձեռք չեն: Յեթե գարնանը մենք մեր հողերը հաճախ չերկելինք և չփոցիսելինք, բամբակի բարձր բերք չեյինք ստանա:

Քանի անգամ և ինչպես ենք հերկել մենք գարնանը հողը:

Ֆայզուլլա Յունուսովի հողամասում գարնան ամբողջ աշխանում կտարարվել է չորս հերկ:

Առաջին յերկու հերկը կտարարվել են ԿՍ ձիաքարշ գու-

թանով՝ 15 սանտիմետր խորությամբ, յերբորդը—տրակտորային գութանով՝ 20 սանտիմետր խորությամբ և վերջապես չորրորդը՝ նորից ձիաքարշ գութանով՝ 15 սանտիմետր խորությամբ։ Ամեն մի հերկումից հետո դաշտն անպատճառ փողխվում եր:

Ֆայլուլա Յունուսովը ճիշտ է ասում, թե վորքան շատ հերկ լինի, այնքան ավելի լավ բամբակի համար։ Ինչպես վոր մարդու համար ավելի լավ ե քնել փափուկ, քան թե կոշտ անկողնում, այնպես ելքամբակի համար ավելի լավ ե արձակ բունել փիրացրած, լավ հերկած և մշակած հողի մեջ։

Բայց դրանից, այդ հաճախակի հերկերով մենք վոչնչացնում ենք դաշտերի մոլախոտերը։ Ահա թե ինչու ֆայլուլայի հողամասն այդպես մաքուր և մոլախոտերից։

Յեվ գարնանն ալգպես և աշխատել վոչ միայն ֆայլուլան, այլև մենք բոլորս։

Տիերքայի Միրզայիվը 80 հեկտարը հերկել ե տրակտորով յերկու անգամ, իսկ մի անգամ՝ գութանով։ 24 հեկտար ավելի ծանր հող նա հերկել է չորս անգամ, չհաշված աշնանափարը։ Ամեն մի հերկից հետո նա անպատճառ փողխել և փիրացրել ե հողը, ըստ վորում փոցխելու հետքերի քանակությունը կախված է յեղել հողի վորակից։ Ծանը հողերը Միրզայիվն ամեն հերկից հետո յերկու անգամ փոցխել և փիրել է։

Զաւրա Բօրսկալանովը «Սոցխալիզմ» կոլտնտեսության մեջ դարնանը գործել և այսպես բերքի հողերը հերկել ե յերեք անգամ, վորից յերկու հերկը կատարել ե ձիաքարշ գութանով, կատարյալ խորությամբ, իսկ յերրորդը՝ ամաչներով։

Առաջին հերկը կատարվել է ձիաքարշ գութանով, իսկ հետո անմիջապես գործի յեն դրել փոցխը, մինչեւ հողի լավ մշակումը, և վերջապես փոցխելուց հետո տեղի յեռնեցել փիրումը։

Մոռավորապես հինգ—ութ որից հետո սկսվել ե յերկորդ հերկը, վորին անպատճառ հետեւել ե փոցխումն ու փիրումը։ Փոցխումն ու փիրումն անհրաժեշտ ե կատարել, վորպեսզի խոնավությունը հողի միջից նվազ չափով գոլորշիանա։

Յեվ, վերջապես, ցանքսն սկսելուց քիչ առաջ հողը հերկվել ե յերրորդ անգամ ամաչով՝ մի հետքով։ Ամաչից հետո կատարվել ե փոցխումն ու փիրումը և ապա սկսվել ցանքը։

Վարը կատարվել ե խաչմերուկ։ Վարել են մինչև 20 սանտիմետր խորությամբ։ Այդ կոլտնտեսության մեջ ամեն մի կոլտնտեսական ունի չափ, վորով նա չափում է վարի խորությու-

նը։ Ամենախոր վարն առաջինն է, յերկրորդը՝ մի քիչ յերես առաջինից, իսկ ամենամանը վարը կատարում են ամաչով։

Չուրա Բորոկալանովը քարքարոտ հողերը նախապես վորոգել ե ակոսիկներով մի ամբողջ որ, իսկ վարը կատարել յերեք անգամ, վորից յերկուսը ձիաքարշ գութանով և նախացանքայինը՝ ամաչով։

Ողով Գուզել Բահրիդի («Բուշկիկ» կոլտնտեսության ողակավարուհին) իր հողամասը գարնանը վարել ե յերեք անգամ։ Հոնդմիջումներով 10—15 որը մեկ վերջին վարից առաջ նա ըրել ե իր հողամասը—աղոտված հողերը՝ յերկու անգամ, իսկ մուսները՝ մեկ անգամ։ Հողը չորանալուն զուգընթաց ել վարել և այն։ Անկյունների անհարթությունները նա փորփրել ե քեթենով։

Յթա Խոջան կատարել է չորս վար։ Աշնանավարից 20 որ անցած, այսինքն մոտավորապես հունվարի 20-ին, նա կատարել է յերկորդ վարը ձիաքարշ գութանով։ 20 որից հետո նա կատարել ե յերրորդ վարը՝ 16—18 սանտիմետր խորությամբ։ Մարտի 23-ից սկսել են առաջին դարնանային վոռոգումը։ Զրելուց առաջ փոցխել են հողը, ինչպես նաև պլանավորել և կարգավորել թմբերը։ Զրել են վողողելով, առանց ակոսիկների ոգնության։ Զրի շերտը յեղել է 12—14 սանտիմետր։

Ապրիլի 3-ին Աթա Խոջան վերջացնում է ջրելը, իսկ 5-ին արդեն սկսում նախացանքային վարը։ Նախացանքային վարը կատարվել ե տրակտորով 20 սանտիմետր խորությամբ, վորին հետեւել են փոցխումն ու փիրումը։ Ցանքսն սկսվել ե անմիջապես փիրումից հետո։

Այսպիսով համարյա մենք բոլոր, վոր ստացել ենք ամերիկական և յեգիպտական բամբակի սեկորդային բերքեր, գարնանը կատարել ենք առնվազն յերեք վար, ըստ վորում գարնային յուրաքանչյուր վարից հետո փոցխել և մեծ մասամբ փիրել ենք հողը։

Յեվ մենք կարող ենք հավաստիացնել բոլոր կոլտնտեսականներին և գյուղատնեսներին, վոր այդպիսի մշակումից ահազին ոգուած և ստացվել բերքի համար և վոր մեր դաշտերում չեն ունեցել հողի չորացում կամ նրա կառուցվածքի քայլացում։ 1936 թվին ավելի բարձր բերք ստանալու համար գարնանը մենք ավելի հաճախ ենք վարելու, ավելի մեծ խնամքով մշակելու մեր հողերը։ Սեփական փորձից մենք լավ գիշենք մշակելու մեր հողերը։

տենք, վոր այն հողը, վորի վրա ցանում ես բամբակը, պետք է շատ լավ մշակես և վրայի մոլախոտերն ամբողջովին վոչընչացնես: Նա աշնանից և գարնանից լավ պարարտացրած պետք է լինի, նա պետք է ձմեռը և գարնանը լավ ջրված լինի, վորպեսպի բամբակը խոնավության պակասություն չզգա:

Բացի դրանից, բամբակը խոնավությամբ ապահովելու համար մենք անպատճառ մաքրում ենք վոռոգման ցանցը: Մաքրել ենք մենք և աշնանը, և՝ գարնանը: Որինակ, իլրամովի անվան կոլտնտեսության մեջ, վորտեղ աշխատում են ընկ. Տիշերայ Միրզայելը, ներքին մանր ցանցը մաքրել են յերկու անդամ՝ աշնանը և գարնանը, իսկ շըջանային մեծ ցանցը—մի անդամ՝ գարնանը:

Համարյա մենք բոլորս գարնանը կատարել ենք նախացանքային վոռոգումն: Գարնանային վոռոգումը չի կատարել ժայդուլլա Յունուսովը, վորովհետեւ նրա հողը բավարար չափով խոնավ և յեղել և կարիք չի ունեցել գարնանային վոռոգման: Իսկ Յունուսովի հողը խոնավ և յեղել այն պատճառով, վոր նա իր հողամասը յերկու անդամ ջրել և ձմեռը, իսկ գարնանը պահել փխրուն դրության մեջ:

Հողի հիմնական պարարտացումը մենք կատարել ենք աշնանը, բայց յերբ պահանջ և յեղել, մենք շարունակել ենք պարարտացնել հողերը նաև գարնանը: Որինակ, Յունուսովի հողերը ծանր են, հեշտությամբ կեղևակալում են: Այդպիսի հողերը դոմաղբի մեծ կարիք ունեն: Իմանալով այդ, Յունուսովը չի բավականացել նրանով, վոր աշնանը մտցրել և հեկտարին 1000 փութ գոմաղբ և հանքային պարարտանյութեր: Գարնանային վաղ փոցխումից հետո նա լրացրիչ կերպով մտցրել և հեկտարին 1000 փութ գոմաղբ: Բայց նա դրանով ել չի բավականացել: Ճանաչելով իր հողամասի յուրաքանչյուր կտորը, Յունուսովը լրացրիչ գոմաղբ և մտցրել ամենից շատ ուժասպառված տեղերը նաև առաջին բուկը տալու ժամանակի:

Մեծ ուշադրությամբ մենք սերմը նախապատրաստել ենք ցանքսի համար:

Դեռ ևս ցանքսից շատ առաջ մենք մաքրել ենք ցանքսի նյութը վտիու սերմերից, սև, կանաչ հատիկներից, հիբրիդներից (խառնածին) և ամենատեսակ վտիու: Մաքրելուց հետո, ցանելուց անմիջապես առաջ, թրջել ենք սերմերը ջրի մեջ:

Ֆայզուլլա Յունուսովը սերմերը թրջել և սերմով լի պարկը

դնելով առվի մեջ և պահել այդպիս՝ ցուրտ յեղանակին յերեք որ, իսկ տաք յեղանակին՝ յերկու որ:

Նարիմբարտ Խամբայիլը յեղիպտական բամբակի սերմերը թրջել և մեկից մինչև յերեք որ՝ 50—60 կիլոգրամ տարողությամբ կավիկ մեծ կաթսաների մեջ: Կաթսաների ջուրը փոխում ելին: Այդ յեղանակով թրջելու միջոցին անպատճառ պետք են հսկել, վոր սերմերն ամբողջ ժամանակ ծածկված լինեն ջրի տակ, հակառակ դեպքում նրանք արագորեն ծիլ են տալիս և դառնում անպետք ցանելու համար:

Ցանքը մենք կատարել ենք խոնամքով մշակված և խոնավ հողի մեջ: Ցանել ենք դանազան ժամանակներում, վորովհետեւ մեր կոլտնտեսությունները գտնվում են տարրեր շրջաններում: Ցանել ենք ամենահարմար յեղանակին: Մենք ջրից կախում չենք ունեցել, վորովհետեւ մեր հողերը վաղուց արդեն լավ վոռոգված են լեղի: Մենք կախում չենք ունեցել հողի մշակումից, վորովհետեւ մեր հողերի ամեն մի կտորը լավ մշակված և յեղել: Մենք կախում չենք ունեցել պարարտանյութերից, վորովհետեւ մեծ մասմբ մեր հողերը դեռ ևս աշնանից լավ պարարտացրած են յեղել: Մենք սպասել ենք միայն լավ, բարեհաջող յեղանակից ցանքսն սկսելու համար: Մենք չենք շատպես վոր ցանենք, վորովհետեւ բամբակը սիրում և ջերմ, լավ տաքացած հող:

Ապրիլին մեզանում ցանքսի ամենայեռուն ժամանակն եր: Մեզանից շատերն ապրիլի կեսին արգեն ավարտել ելին ցանքսը: Ֆայզուլլա Յունուսովը վերջացրել եր ցանքսը ապրիլի 10-ին Աթա Խոջաալին՝ 14-ին, Շարիֆբարան՝ 17-ին և այլն:

Ցանել ենք գլխավորապես Բանների գծիչ ունեցող ձիաքարը շարքացաներով: Բայց մի քանիսը ցանել են նաև տրակտորային շարքացաներով:

Սերմերը թաղել ենք սովորաբար 4—5 սանտիմետր խորությամբ: Մենք կարծում ենք, վոր այդ խորությունն ամենաբարեհաջողն և սերմերի համար, վորովհետեւ այդ տեսակ խորության դեպքում ստեղծվում են արագ աճման համար բոլոր անհրաժեշտ պայմանները:

Տիեբայ Միրգայիլը 1935 թվին հետեւյալ փորձն և կատարել: Ցանելուց հետո շարքերի վրա ակոսիկներով դրել են ձիւտ աղը: Դա ողնում և հողի կեղևավորման դեմ, և այդ դեպքում կեղևներ չեն դոյանում:

Ֆայզուլլա Յունուսովը նույնպես ցանքաշարքերը ծածկել ե

Հոր գոմազբի բարակ շերտով: Այստեղ ևս կեզներ չեն գոյացել, իսկ բողբոջներն ստացվել են հօծ, միատեսակ: Հենց առաջին փորման ժամանակ ֆայզուլլա Յունուսովը ծածկել է արդ գոմազբը քեթմեններով: Մենք խորհուրդ ենք տալիս բոլոր կոլտնաեսություններին այդպիսի փորձեր կատարել իրենց տնտեսության մեջ:

ԲԱՄԲԱԿԻ ԽՆԱՄՔԸ ԴԱՇՏՈՒՄ

Այն բոլոր աշխատանքները, վորոնց մասին մենք խոսել ենք, չափազանց կարենոր են: Բամբակի բարձր բերք կարելի յետանալ միայն այն գեղքում՝ յերբ ուշի-ուշով կատարեն ակրոտեխնիկայի բոլոր հրահանգները, սկսած աշնանային վարից մինչև բերքահավաքը: Անկարենոր, աննշան բան չկա մեր բամբակի գործի մեջ:

Բայց և այնպես առանձնապես կարենոր են բամբակի խնամքի աշխատանքները դաշտում: Այստեղ անուշադրությունն ու անփությունը հեղառությամբ կարող են վոչնչացնել ամբողջ բերքը: Յեթե վատ կատարենք նոսրացումը, ուշացնենք վոռոգումը, բուկը տալը, այդ գեղքում ավելորդ և անգամ բարձր բերք ստանալու մասին խոսելը:

Ֆայզուլլա Յունուսովը, վոր ստացել է բամբակի մինչև այժմ աշխարհում չտեսնաված բերք, այսպես և խնամել դաշտում ամառը բամբակը:

Քանի վոր աշնանը, ձմեռը և գարնանը նա խնամել է իր հոգամասը վորպես հարազատ վորդուն և ցանել է լավ տեսակի լիարժեք, մաքրած և թրջած սերմեր, ուստի նրա դաշտերում յերեացել են լավ, համատեսակ ծեր: Յանքսից 13 որ անցած Յունուսովը կատարել է բողբոջների առաջին նոսրացումը:

Յերբ բամբակի վրա յերեացել են առաջին 2—3 տերենները, նա կատարել է յերկրորդ և վերջին նոսրացումը: Նոսրացումների ժամանակ վատ բույսերը հանվում ելին արմատով, մնում ելին միայն լավերը: Յերկրորդ նոսրացումից հետո նա թողնում է փոսիկի մեջ յերկու կամ յերեքական բույս: Բույսերի միջև վերջնական տարածություն Յունուսովը թողնում եր 20 սանտիմետր: Այսպիսով Յունուսովի դաշտում մնում եր ավելի քան 100 հազար բույս մի հեկտարի վրա: Մնացող բույսերի խտության հարցը շատ կարենոր հարց եւ Սովորաբար նույնիսկ

բերբի հողերի մերա հեկտարին թաղնում են 60—70 հազար բույս: Պարաբրտացման խիստ կարիք ունեցող ծանր հողերի վրա Յունուսովը վարչել է թողնել հեկտարին 100 հազարից ավելի բույս: Հողի վանոնավոր մշակումը, պարաբրտանյութերի հմուտ մուծումը, բամբակի գուշակումը խնամքը և յուրաժամանակ վոռոգումը թույլ են տվել նրան պահպանելու և աճեցնելու բոլոր թողած բուկսերը:

Առաջին վոռոգումը Յունուսովը կատարել է մայիսի 20-ին, իսկ մինչև այդ նա չորս խոր փխրեցում է կատարել և յերեք կուլտիվացիա: Առաջին վոռոգումը Յունուսովը կատարել է կոկոնները բացվելու սկզբում, յերբ բույսերի վրա կային 6—7 տերեխներ:

Վոռոգումը նա կատարել է կուլտիվատորով՝ մոտ 12 սանտիմետր խորությամբ փորած ակոսիկներով: Ջրելու ժամանակը Յունուսովը սովորաբար վորոշում եր տերենների դրությունից և գույնից: Յեթե տերեններն սկսում են մի քիչ սնանալ, նշանակում ե, վոր ջրելու ժամանակն ե:

Առաջին վոռոգումից հետո Յունուսովը կատարել է հինգերարդ խոր փխրեցումը և մշակումը: Յերկրորդ վոռոգումը նա կատարել է մոտավորապես 8 որ անց՝ հինգերորդ փխրեցումից, կամ 13—14 որ անց՝ առաջին վոռոգումից: Յերկրորդ վոռոգումից հետո Յունուսովը կատարել է վեցերորդ փխրեցումը և մշակումը:

Դաշտի այն մասերում, վորտեղ առաջին յերկու վոռոգումների ժամանակ նկատվում եր բույսի թույլ զարգացում, Յունուսովը շարքերի մեջ մտցրել է լրացուցիչ աղբային պարաբրտանյութ, վորպեսզի սնունդ տա և ամրացնի յետ մնացող թույլ բույսերին: Թույլ բույսերն ամրացան և հավասարվեցին մնացած բամբակին:

Յունուսովի իր դաշտում կատարել է ընդամենը 9 վոռոգում, 7 փխրեցում, 7 կուլտիվացիա և մոլախոտերի մի քաղաքան:

Ստալինի անվան կոլտնտեսությունը, վորտեղ աշխատում է Յունուսովը վորպես ողակավար, լավ, առաջավոր կոլտնտեսություն ե: Այդ կոլտնտեսությունն ստացել է միջին հաշվով ամբողջ տնտեսության մեջ հեկտարից 26,9 ցենտներ ամերիկական բամբակ: Դա փոքր բերք չե, սակայն ֆայզուլլա Յունուսովին իր ողակի հողամասում ստացել է հեկտարից 57 ցենտներ, այսինքն իր կոլտնտեսության միջին բերքից ավելի քան յերկու անգամ:

Նախորդ տարիներում Յունուսովի ողակի հողամասում շաբանակ բամբակ են ցանել և վոչ մի ժամանակ այդպիսի բերք չեն ունեցել: Այդ հողամասը Յունուսովի ողակին են ամբարացրել 1934 թվի աշնանից միայն: Հետեւաբար ժայզուլլա Յունուսովը ունկորդային բերք և ստացել վոչ թե այն պատճառով, վոր նրա հողը մի բացառիկ հող եր, այլ այն պատճառով, վոր նա աշխատել ե բացառիկ ձեռվ, ավելի լավ, քան ամբողջ կուտանշեսության մեջ:

Յունուսովի ողակը կատարել է կը կնապատիկ աշնանավար, իսկ ամբողջ կոլտնտեսությունում միայն մի անգամ է կատարվել: Յունուսովը իր հողամասի վրա կատարել է 7 փխրեցումներ, իսկ ամբողջ կոլտնտեսությունում միայն 4 փխրեցում և յեղել, ըստ վորում Յունուսովի ողակը 7 փխրեցումներից 4-ը կատարել ե բամբակենու համար ամենակարեսը և ոգտակար ժամանակ, այսինքն՝ մինչև մայիսի 20-ը, նախքան առաջին վորոգումը:

Միջին թվով կոլտնտեսության մեջ կատարվել է 6 վորոգում, իսկ Յունուսովը, ինչպես հայտնի յե, կատարել է 9 վորոգում: Այդ նշանակում ե, վոր նա ավելի հաճախ է ջրել և բամբակն ավելի շատ խոնավություն է ստացել:

Բացի դրանից, Յունուսովն սկսել է ջրել իր հողամասն ամբողջ կոլտնտեսությունից ութոր առաջ և այդ հանգամանքը նույնպես խաղացել ե իր գերը բերքի բարձրացման մեջ: Առանձին ուշադրությամբ ե հետեւ Յունուսովն աշխատանքի վորակին: Նրա ողակում բոլոր աշխատանքները կատարվել են բացառիկ խնամքով: Վոռոգումները կատարվել են հաշվի առնելով դաշտի յուրաքանչյուր կտորի առանձնահատկությունները: Զրելու բացարձակ հավասարաչափությունն ապահովված է յեղել ամբողջ դաշտի վրա:

Այսպիսով մենք տեսնում ենք, վոր Յունուսովը աշխարհում չախսնաված բամբակի բերք և նվաճել բնությունից միամիայն շնորհիվ այն բանի, վոր հմտությամբ ե կիրառել աղբուժնիկան, շատ լավ ճանաչել ե իր հողամասի ամեն մի փոքրիկ կտորը, վոր նա ինքը և նրա ողակի կոլտնտեսականներն աշխատել են իրեն իսկական բոլշեկիներ:

Այն աղբուժնիկան, վոր կիրառել է Յունուսովը, պետք ե սովորեն վոչ միայն կոլտնտեսականները, այլև մի շարք գյուտանունները:

Անհրաժեշտ ե մանրազնին ուսումնասիրել Յունուսովի կատարած յուրաքանչյուր աղբուժնիկան միջոցառումը, սկսած գուզափայն արմատից քաղելուց մինչև մոլախոտերի վոչնչացումը: Գետք է ճանաչել իր դաշտն այնպես, ինչպես Յունուսովն է ճանաչում, վորպեսզի ժամանակին և կանոնավորապես գլուխ բերվեն այդ բոլոր միջոցառումները, հարմարեցնելով նրանց դաշտի յուրաքանչյուր կտորին, բամբակի յուրաքանչյուր թվին:

Ի հարկե, զարմանալի չե, վոր Յունուսովի ողակում կատարված աշխատանքի շնորհիվ բամբակն ամենեին չի վնասվել վոչ վնասատուներից, վոչ հիվանդություններից, վորովհետև աղբուժնիկայի այն ամբողջ սիստեմը, վոր կիրառել է ֆայզուլլա Յունուսովին իր դաշտերում՝ բարձր բերք ստանալու նպատակով, միաժամանակ պահպանում ե բամբակենին վնասատուներից և հիվանդություններից: Ֆայզուլլա Յունուսովի և նրա ողակի ութ կոլտնտեսականների՝ թույ նուրուլլայեվի, Համիդ Արիդովի, Սավրա Արիկովի, Նոզակաթ Յունուսովի, Կամրաթույեվայի, Մութթաֆա Համիդովայի, Արիդա Համիդովայի Շարաֆաթ Արտիկովայի՝ աշխատանքն որինակելի աշխատանք է: Նրանք գործել են ազրոտեխնիկայի կշռադատված սիստեմով և ստացել են ավելի լավ արդյունք, քան մենք բոլորս՝ նրանք ստացել են աշխարհում չտեսնված բերք:

Բայրամ-Ալի շրջանի «Բոլշեկիկ» կոլտնտեսության ողակավարուհի Ողով Գուգել Բահիբիլը, վոր ստացել է հեկտարից 50 ցենտներ ամերիկական բամբակ, նույնպես հիանալի կերպով և խնամել բամբակը:

Յունուսովի նման նա ևս յերկու նոսրացում է կատարել՝ բների մեջ թողնելով առաջին անգամ 10—15 սանտիմետր, իսկ յերկորդ անգամ՝ 20—25 սանտիմետր հեռավորություն: Ցերկորությերնական նոսրացման ժամանակ նա թողել է միայն այն բույսերը, վորոնք զերծ են յեղել հիվանդություններից և վնասված չեն յեղել վնասատուներից:

Առաջին նոսրացումը նա սկսել է այն ժամանակ, յերբ բույսերը հասել են մոտավորապես 10 սանտիմետր բարձրության և ունեցել են 2—3 տերե: Ցերկորությունը նոսրացումը նա կատարել է առաջինից 15—16 որ անց: Մաքրելու ժամանակ նա դուրս է քաշել բույսերն արմատներով: Առաջին նոսրացման ժամանակ նա չի կատար ել վոչ փխրեցումներ և վոչ ելքադիան, իսկ

յերկրորդ նոսրացման ժամանակ թեթև քեթմենալին մշակում է արել: Առաջին թեթև փխրեցումից 10—12 որ անց նա կատարել է յերկրորդ մշակումը:

Յերկրորդ անգամ նա նույնպես փխրեցրել է վոչ լիսակատաբ-խորությամբ, բայց զարձյալ ավելի խոր, քան առաջին անգամ, ըստ վորում յերկրորդ փխրեցման ժամանակ նա բույսերի բուկն է տվել:

Դաշտի այս ամբողջ մշակումը նա, Յունուսովի նման, կատարել է գեռ ևս վոռոգումից առաջ:

Բահրիդն առաջին վոռոգումն արել է ցանելուց 50 որ անց, յերբ մասսայական քանակությամբ յերեսացել են կոկոնները: Ավելի վաղ ջրել նա չեր կարող, վորովհետեւ շրջանում ջուր չկար: Բայց այսպես ուշ ջրելու գեպքումն ել նրա բամբակը չի վնասվել, վորովհետեւ Յունուսովի նման նա ել աշնանը, ձմեռը և գարնանը խնամքով մշակել է, շատ հիանալի պարաբռացրել և առատորեն ջրել իր հողամասը: Այդ պատճառով ել բամբակը ցանելուց հետո 50 որվա մեջ ջրի առանձին կարիք չի ունեցել: Նրա հողամասը միջակ կավավազախառն և և ջուրը՝ լավ մշակելու շնորհիվ՝ կարող է յերկար ժամանակ պահպանվել նրա մեջ: Իսկ ավելի թեթև, ավազախառն հողերը նույնիսկ շատ լավ մշակելու գեպքում հարկավոր ե առաջին անգամ ավելի վաղ ջրել:

Բահրիդը վոռոգումը կատարել է միապաղադ վողողումով: Ի հարկեա ավելի լավ և ջրել ակոսիկների միջոցով, բայց Բահրիդի հողամասը հարթ ե, ինչպես սեղանի յերեսը, թեքումներ չունի և գրա համար ել ստիպված ջրում և միապաղադ վողումով:

Առաջին վոռոգումից հետո, հենց վոր հողը հասունացել է, Բահրիդը կատարել և քեթմենային մշակում լիսակատար խորությամբ:

Ըստամենը Բահրիդն ամառը կատարել է 6 փխրեցում և մուլխոտերի մի քաղիան այն տեղերում, վորտեղ մոլախոտերը դեռևս մնացել ելին, այն և ճանապարհների մոտ, առուների ափերին, չիելերի մոտ: Բահրիդը վոռոգում և կատարել միայն չորս անգամ: Հարկավոր եր ավելի ջրել, վեց կամ նույնիսկ յոթ անգամ, բայց վորովհետեւ ջուրը քիչ եր, նա ստիպված է յեղել բավականանալ չորս անգամ ջրելով:

Բայց նույնիսկ չորս վոռոգումով ել Բահրիդի ողակը կա-

վավազախառն հողերից կարողացել է ստանալ հեկտարից 50 ցենա-ներ ամերիկական բամբակ:

Չնայած ջրի պակասության, Բահրիդի ողակը կարողացել է այսպիսի բարձր բերք ստանալ, վորովհետեւ նրա ողակումն ել, ինչպես Յունուսովի ողակում, կիրառվել է ազգոտեխնիկայի կշռագատված սիստեմ՝ սկսած աշնանից, վորովհետեւ Բահրիդը մի որ անգամ չի թողել իր հողամասն առանց հսկողության, վորովհետեւ նրա ողակը գործել է միահամուռ ուժերով:

Ստալինյան շրջանի «Դոբրովոլնից» կոլտնտեսության 3-րդ բրիգադի բըրդագիր Ուազ Մամեդ Այգոգին նույնպես կատարել է բամբակի յերկու նոսրացում:

Յերկրորդ՝ վերջնական նոսրացումը նա կատարել և այն ժամանակ, յերբ բույսերն ունեցել են 5—6 տերեներ: Նա թողել է բների միջն 25—30 սանտիմետր հեռավորություն և ամեն մի փոսիկի մեջ յերկու բույս:

Առաջին վոռոգումը կատարել է բամբակենու կոկոնները յերեալու սկզբին: Մինչեւ առաջին վոռոգումը կատարել է յերկու փիբրեցում, ըստ վորում առաջին մշակումը կատարել է վոչ լրիվ խորությամբ արված առաջին նոսրացումից հետո, իսկ յերկրորդ փիբրեցումը լրիվ խորությամբ՝ կատարել է համարյա յերկրորդ նոսրացման հետ միաժամանակ:

Յերկրորդ փիբրեցման ժամանակ նա մշակումը կատարել է հինգթաթ կուլտիվատորով:

Դրանից հետո նա 15—16 սանտիմետր խորությամբ ակոսիկներ և քաշել, ապա բրիչով շինել 25—30 սանտիմետր խորությամբ առու, վոր հետո ուղղել և բահող: Ակոսիկները շինել ե ծածկած: Զուրը հավաքվում եր միայն ակոսիկների մեջ, իսկ բամբակենու շարքերը չելին վողողվում: Ամեն մի կետի ջուրը մատակարարում ելին առանձին:

Ազգողջին իր հողամասում կատարել է 5-ից 7 վոռոգում՝ նայած հողին: Ծանր հողերը նա ջրել է հինգ անգամ, իսկ ավելի թեթեները, ավազախառն հողերը—յոթ անգամ: Ամեն մի վոռումից հետո հենց վոր հողը մի քիչ չորացել և կարելի յեղել սկսել մշակումը, նա կատարել է միապաղադ փիբրեցում: Այնունետեւ գործի յեղել հինգթաթ կուլտիվատորը: Առաջին չորս վոռոգումներից յուրաքանչյուրից հետո Այգոգին անպատճառ փիբրեցում կուլտիվացիա յեարել, և հինգերորդ վոռոգումից հետո կատարել է միայն փիբրեցում: Իսկ վեցերորդ և յոթերորդ վոռո-

գումից հետո, յերբ արդեն բամբակենին հոծությամբ բուսաձեր, քաղճան և կատարել ձեռքով և ուրագներով: Բացի դրանից, Այդոզին այրել և մոլախոտերը դեռևս ծաղկելուց առաջ սահմանների վրա, առուների ափերում և այլ տեղերում: Մոլախոտերը գաշտերից անպատճառ հեռացվում էյին: Մոլախոտերի մի մասը նա հնձում եր և նրանով կերակրում անասուններին:

«Սոցիալիզմ» կոլտնտեսության մեջ, վոր տվել և հեկտարին 28 տեսաներ յեգիպտական բամբակ, Զուրա Բօրիկալանովը նույնպես, վորպես կանոն, կատարել և յերկու նոսրացում: Առաջին նոսրացումը և բուկը տալն սկսել են այն ժամանակ, յերբ բամբակն ունեցել ե 3—4 տերեւ: Հենց այդ ժամանակ ել կատարել են վիրեցում, ամբողջ քեթմենի խորությամբ: Յերկրորդ և վերջնական նոսրացման ժամանակ թողել են փոսիկում միմի բույս՝ 8—10 սանտիմետր իրարից հետու: 8—10 որից հետո կատարել են յերկրորդ բուկիցը և 10—12 որ անց գրանից մի քիչ նվազ խորությամբ՝ յերրորդ բուկիցը. բոլոր յերեք բուկիցն ել կատարել են ձեռքով:

Յերրորդ անգամ բուկը տալուց հետո մացրել են հանքային պարարտանլութեր և բրիչով շինել ակոսիկներ: Այդ ժամանակ պարարտանյութերը ցանում են ակոսիկների յեզրերի վրա: Այսպիսով «Սոցիալիզմ» կոլտնտեսությունում մինչեւ վոռոգումը կատարել են յերկու նոսրացում, յերեք վիրեցում և մացրել են պարարտանյութեր:

Առաջին վոռոգումը կատարել են ցանելուց 30—35 որ անցած, բաց թողնելով ջուրն ակոսիկների մեջ ծանր հոսանքով: Վոռոգումից հետո, յերբ հողը հասունանում է, կատարել են մշակումը, ապա վիրեցումը, միաժամանակ վոչ շատ խորը բուկը տալով հենց շարքերի մեջ: Զրել են 7-ից մինչև 15 անգամ, նաշած հողին. ուժեղ, բերրի հողերը ջրել են 7—9 անգամ, իսկ քարքարոտ հողերը՝ մինչև 15 անգամ:

«Սոցիալիզմ» կոլտնտեսության մեջ մեծ ուշադրություն են դարձել վոռոգման յերկարատեսության վրա:

Առաջին յերեք վոռոգումները տեսել են 10-ական ժամ, չորսրորդը՝ 14 ժամ, իսկ հինգերորդը՝ մոտ 18 ժամ այն պատճառով, վոր այդ ժամանակ բույսերի վրա կային արդեն 20—25 կը դուդներ. 6-րդ և 7-րդ վոռոգումները տեսել են մի որ և վերջապես 8-րդը և 9-րդը՝ մի որից ավելի: Այսպիսով վոռոգման տե-

վողությունը մեծացել և բույսի զարգացման և խոնավության պահանջի աճման համեմատ:

Հաշվի լեն առել նաև, վոր ուշ վոռոգումների ժամանակ հողը դանդաղորեն և ծծում ջուրը, վորով ավելի շատ ժամանակ և հարկավոր, վոր հողը կշտանա ջրից:

Հողը նույնպես հիմնավոր կերպով են վիրել: Ընդամենը կատարել են 7 վիրեցում և 3 կուլտիվացիա, վորիցյերեք վիրեցումը կատարվել և դեռևս ջրելուց առաջ: Այդպես հաճախ են վիրեցուրել հողն այն պատճառով, վոր փորձով համոզվել են, թե վորքան հաճախ լինի բուկը տալը, այնքան դաշտերը մաքուր կման, վիասատուները քիչ կինեն: Բորոկալանովը խոստացել է 1936 թվին վոչ թե 7, այլ 9—10 անգամ բուկը տալ, վորպեսզի ավելի մեծ բերք ստանա:

Մոլտառի անվան կոլտնտեսության նախագահ Դադաբայ Խոլմանովը (Խոջինտի շրջանում) յեգիպտական բամբակի վերջնական նոսրացման ժամանակ նույնպես բնի մեջ թողնում եր մի բույս 20—25 սանտիմետր տարածության վրա:

Լավ հողերի վրա նախագան առաջին վոռոգումը նա յերեք անգամ եր բուկը տալիս: Առաջին բուկիցը տալիս եր ծլերը յերեցալիս, յերկրորդը՝ 5 որից հետո և յերրորդը՝ 5—6 որ անց յերկրորդից: Այդ հաճախակի բուկ տալը Խոլմատովը կատարում եր մոլտառուների դեմ պայքարելու և հողը վիրուն դարձնելու համար:

Վաս հողերի վրա առաջին վոռոգումը կատարում եյին յերկրորդ անգամ բուկ տալուց հետո, իսկ ջրելուց հետո իսկույն յերրորդ անգամն եյին բուկը տալիս:

Ընդամենն ամառը յոթ անգամ են բուկ տվել: Վոռոգումը կախված է յեղել նաև հողի հատկությունից:

Մոլտառի անվան կոլտնտեսությունը յերեք տեսակ հող ունի. ծանր, կավախառն հողեր—ամենից ուժեղն ու բերրին, նվազ ծանր հողեր և վերջապես բոլորվին թեթև հողեր՝ ամենից անըերրի, գետաքարերով ծածկված:

Կոլտնտեսությունն սկսեց յուրացնել քարքարոտ հողերը 1931 թվից և առաջին տարին ստացավ հեկտարից միայն չորս ցենտներ: 1934 թվին այդ հողերից ստացել են 8 ցենտներ հեկտարից, իսկ 1935 թվին՝ արդեն 12 ցենտներ: Այդ հողերն առաջ բոլորովին անբերրի լեն յեղել: Խնամքով մշակելու, պարարտանյութեր մտցնելու և առվույտ ցանելու միջոցով կոլտնտեսականներն այդ քարքարոտ հողերը բերրի յեն դարձրել:

Բավական ե ասել, վոր 1935 թվին այդ հողերը նրանք չըել են 2—3 որը մի անգամ, այդպիսով ամառվա ընթացքում ջրելով մոտ 30 անգամ։ Ավելի ծանր հողերը ջրվել են 15 անգամ։ Կոլտնաեսությունն ստիպված ե յեղել այդքան շատ ջրել այն պատճառով, վոր այդ տեղերում բուսականությունը քիչ ե, քամին ազատորեն փչում ե և խոնավությունը շատ շուտ դոլորշանում ե։

Խոնավությունն ավելի լավ պահպանելու համար աշխատել են գլխավորապես գիշերը ջրել։ Վոռոգումն սկսել են զանազան կերպով։ Վատ հողերը, վորաեղ ծլերը նոսր են, առաջին անգամ սկսել են ջրել բուկը տալուց անմիջապես հետո, վորպեսզի ծլերը շուտ հասնեն։ Լավ հողերը, վորաեղ ծլերը լավ են բուսել, ջրել են ավելի ուշ՝ 3-րդ և նույնիսկ 4-րդ անգամ բուկը տալուց հետո։

Առաջին 5—6 վոռոգումները բոլոր հողերի վրա կատարել ենք մեջ տալով մեկական ակոս, իսկ վեցերորդ վոռոգումից սկսած ջրում ելինք բոլոր ակոսների միջոցով։

Նույնպիսի ուշադրությամբ են խնամել բամբակը նաև մեր մյուս առաջավոր կոլտնտեսություններում։

Մեզ հաջողվել ե կիրառել նաև մի շարք ագրոտեխնիկական միջոցներ։ Մեր կոլտնտեսություններից շատերը, որինական ջառորեն լուծել են վերջին վոռոգման հարցը։

Սովորաբար վերջին վոռոգումը կատարել են դեռ ևս առաջին բերքահավաքի սկզբին։ Կարծել են, վոր բերքահավաքն սկսելուց հետո բամբակն այլևս ջրելու կարիք չկա։

Իսկ մեր կոլտնտեսությունների փորձը վկայում ե, վոր բերքահավաքն սկսելուց հետո ջրելն ոգտակարեն։ Տիշիբայ Միրզայեվը պատմում է, վոր նրա կոլտնտեսության մեջ վերջին վոռոգումը կատարել են սեպտեմբերի 5-ին՝ առաջին բերքահավաքը վերջացնելուց հետո, ըստ վորում ջրել են վոչ թե ամբողջ դաշտը, այլ միայն չոր հողամասերը։ Կոլտնտեսության մեջ համատարած վոռոգումը կատարել են 60 հեկտար տարածության վրա և հետևանքը յեղել ե այն, վոր չհասունացած կնքուղները ջրելուց հետո հասունացել են, և բամբակն այսպիսով հավասարվել ե։

Ֆայզուլլա Յունուսովն իր նախավերջին, 8-րդ վոռոգումը կատարել ե բամբակի հասունանալու ժամանակ, իսկ վերջինը, 9-րդը՝ արդեն բամբակի յերկորդ բերքահավաքը հետո և, ինչպես հայտնի յե, Յունուսովին ստացել ե բացարիկ բարձր բերք։

Մեզանից մի քանիսը վերջին վոռոգումը վերջացրել ենք

աելպտեմբերի 10—15-ին, կնքուղների մասսայական բացման ժամանակ։

Ինչպես տեսնում եք, մենք աշխատանք չենք խնայել։ Մենք կշաղատել ենք մեր ամեն մի քայլը, հաշվի յենք առել մեր գաշտերի բոլոր առանձնահատկությունները, ուսումնասիրել ենք կլիմայական պայմանները և այլն։ Մենք աշխատել այնպես խնամել բամբակը, վոր կարողանանք բնությունում այսպիս նից ստանալ բարձրագույն բերք։ Յեզ մենք շատ բան ենք ձեռք բերել։

ԻՆՉՊԵՍ ԵՆՔ ԱՄԱՌԸ ՄՏՃՐԵԼ ՊԱՐԱՐՏԱՆՅՑՈՒԹԵՐԸ

Մենք արգեն գրել ենք, վոր ֆայզուլլա Յունուսովն առաջին անգամ բուկը տալիս իր հողամասի ամենառժամապատեղերը լրացրել գոմազը եր մտցնում։ Դրա համար ել նրա հողամասում բամբակը միշտ ապահովված ե յեղել սննդանյութերի բավարար քանակությամբ։

Զուրա Բոլոկալանովը հանքային պարարտանյութերը մտցրել ե յերբորդ անգամ բուկը տալուց հետո։ Պարարտանյութերը ձեռքերով լցրել են նեղ շարքով շարքամիջերի մեջտեղով թերը ձեռքերով լցրել են նեղ շարքով շարքամիջերի մեջտեղով թերը ձեռքերով լցրել են նեղ շարքով շարքամիջերի մեջտեղով թերը ձեռքերով լցրել են 520 կիլոգրամ բորակածնային և ֆոսֆորային պարարտանյութերի խառնուրդ։

Ողուզ Գուղել Բահրեինը մտցրել ե հանքային պարարտա-

նյութերն առաջին վոռոգումից տասն որ առաջ։

Որազ Մամեդ Այզոգդին հանքային պարարտանյութերը մտցրել ե շարքերի միջև ձեռքերով կոկոնները բացվելու ժամանակ։

Բայց պարարտանյութերը գործադրելու մեջ առանձին հետաքրքրական նվաճումներ ունի ընկ. Տիշիբայ Միրզայեվը (Իկտամիզի անվան կոլտնտեսության բերքատվության խորհրդի նախագահ)։ Նրա կոլտնտեսության մեջ չորս հեկտար բամբակ համարել ելին խոտանված, ճանաչել վորպես յերրորդ տեսակի բամբակ։

Միրզայեվն այսպիս արակ, ողոստոսի 10-ից հետո նու այդ չորս հեկտարին 4000 կիլոգրամ քուսպ մտցրեց և ապա խորը քեթմենացում կատարեց։

Այդ դեպքի մասին Միրզայելը պատմել է Ուզբեկստանի, Կաղախստանի և Կարա-Կալպակիայի առաջավոր կոլտնտեսական-ների և կոլտնտեսուհիների՝ կուսակցության և կառավարության գեկավարների հետ ունեցած խորհրդակցությունում:

«Աշնանը իսկ հավաքեցի 15 պարկ բամբակ, ուղարկեցի մթերման կայանը և գրեցի, վոր ուղարկում եմ խուտանված բամբակ: Այստեղ յերեք որ քննել են և չեն կարողացել հասկանալ, թե ինչո՞ւ Տիշիրայն ուղարկում են առաջի բամբակը խոտանման դրոշմի տակ: Գալիս են ինձ մոտ և հարցնում, թե ինչո՞ւ իսկ իսկ ընտիր բամբակն ուղարկել խոտանման դրոշմի տակ: Այն ժամանակ յես գրապանից հանում եմ նրանց արձանագրությունը, տանում եմ նրանց իմ չորս հեկտար հողակտորը և ասում ընկերներ, ձեր խոտան հանած տեղիցն եմ յես սոտացել այս բամբակը, յեթե դուք գտնում եք, վոր բամբակն անպետք չե, ուրեմն իմ հողն ել անպետք չե: Յեթե դուք իմ ուղարկած բամբակը լավ եք համարում, այն ժամանակ վերանայեցեք ձեր արձանագրությունը (շարժում դահլիճի մեջ, ծիծաղ): Նրանք նշեցին իմ լավ աշխատանքը, այդ չորս հեկտարի բամբակադաշտի լավ գրությունը և այդ հողակտորի բամբակն ընդունվեց վորպես ընտիր տեսակ (ծափեր):

Մոլոսով—դա լավ ե՞»:

Սոտացվեց բացառիկ լավ արդյունք: Մեծ արագությամբ սկսեցին յերեսալ նոր կնդուղներ և խոշորացան հին կնդուղները: Ի վերջո, Միրզայելն ստացավ հեկտարից 15 ցենտներ առաջնակարգ բամբակ:

Այսպիսով սակավաբեր, խոտանված բամբակը, շնորհիվ ժամանակին և հմտությամբ պարարտացնելուն, դարձավ առատարեր առաջնակարգ բամբակ:

Այսուհետեւ ընկ. Միրզայելը լայնորեն կիրառում եր բույսերի նույն պարարտացումը ջրելուց առաջ, ինչ վոր անում եր և Յունուսովը:

Այն առջերում, վորտեղ նա վատ բամբակ եր նկատում, ջրելուց առաջ մտցնում եր կամ հանքային պարարտանութեր կամ գոմազը և ապա անմիջապես ջրում:

Շատ լավ արդյունք եր ստացվում: Այսպիսի պարարտացումից հետո ամբողջ բամբակը բերքահավաքին միատեսակ եր լինում:

Յոթ կոլտնտեսություն, վորոնք գտնվում են միևնույն գյուղիսորհրդում, վորտեղ և և իկրամովի անվան կոլտնտեսությունը, կիրառել են ընկ. Միրզայելը այդ մեթոդը և ստացել թյունը, կիրառել են ընկ. Միրզայելը այդ մեթոդը և ստացել թյունը, կառավարից ավելի, քան 30 ցենտներ բամբակ: Ողոստոս ամեն հեկտարից ավելի, բամբակը կատարել են իրենց դաշտերում և 60 կոլտնտեսություն, վորոնք բոլորն ել դրա շնորհիվ մեծապես բարձրացրին բամբակի բերքատվությունը: Միրզայելը այդպիս բամբակը բերքատվությունների նախագահների հավաքույթ, կայացավ կոլտնտեսությունների նախագահների հավաքույթ, վորտեղ Միրզայելը մանրամասնորեն պատմեց, թե ինչպես և ինքը մացրել պարարտանյութերը:

Մենք ջերմագին խորհուրդ ենք տալիս բոլոր կոլտնտեսություններին, ինչպես նաև գյուղատնտեսներին ստուգել Միրզայելի և Յունուսովի պատճարկած պարարտացման այս լեղանակը և այն կիրառել բամբակի բերքատվությունը բարձրացնելու համար:

Շատ ուժ յենք գործ գրել մենք վասատուների և հիվանդությունների գեմ մղած պայքարում:

Անհատական տնտեսության մեջ հոմոզը մեզ համար մի կատարյալ գժբախտություն եր:

Այն ժամանակ մենք անդոր եյինք վասատուների և հիվանդությունների գեմ կովելու: Իսկ այժմ, 1935 թվին մեր կոլտնտեսալիին դաշտերի վրա չեն յեղել վոչ վասատուներ և վոչ անդություններ: Բարձր կոլտնտեսական ագրոտեխնիկայի, ել հիվանդություններ: Բարձր կոլտնտեսական ագրոգով մենք վանել ենք մեր հզոր կուկութիվ աշխատանքի միջոցով մենք վանել ենք մեր դաշտերից ամեն աղտոտություն:

Համառ և հաջող պայքար ենք մղել նաև մոլախոտերի գեմ: Բոլորին հայտնի են, վոր փիլքեցումը հիանալի միջոց և ցանքում մոլախոտերի գեմ կովելու համար: Իսկ մենք ամբողջ ամառվա ընթացքում վեց փիլքեցումից պակաս չենք կատարել: Յերբ բամբակն այնքան եր մեծանում, վոր այլևս փիլքեցումները չեր կարելի շարունակել, մենք մի կամ յերկու անգամ ձեռքով չեր գարելի քաղանում մոլախոտերը: Բացի դրանից, մենք անպատեյինք քաղանում միատեսակ միջնակների ձառ մի քանի անգամ հնձում ելինք մոլախոտերը միջնակների վրա, ճանապարհների մոտ, առուների ափերին, պարապուտները ըում, ամբողջ ժամանակ մենք վոչնչացնում եյինք, յերբ նրանք յերեւմ եյին:

Որինակ՝ Ողուլ գուղել Բահբիդը մոլախոտերը հավաքում

Եր գաշտերի գարնանային մշակման ժամանակ, տանում գաշտից և այրում:

Մոլախոտերից մաքրված գաշտերը նա սրսկում եր թույներով, վորպեսզի վոչնչացնի նրանց վրայի վնասատուներին:

Զպետք ե կարծել, վոր բարձր բերք ստանալու համար վարած՝ մեր պայքարի մեջ ամեն ինչ հարթ ե ընթացել, վոր վոչ մի դժվարություն մենք չենք ունեցել. Դժվարություններ յեղել են և այն ել վոչ սակավ:

Որինակ՝ Որազ Մամեդ Ալդոգու գաշտերում 1935 թվի հունիսին չոր քամին մեծ վնաս հասցրեց բամբակին: Յեվ յեթե, չնայած այդ դժվախտությանը, Որազ Մամեդը տվել է պետությանը հեկտարից 26 ցենտներ բամբակ, ապա այդ նրանով պետք ե բացարել, վոր նա ձեռքերը չի ծալել, չի նահանջել տարերային դժբախտության առաջ, այլ կոպել ե բոլոր մատչելի միջոցներով չոր քամու հետևանքների դեմ: Չոր քամին փչելու ժամանակ Որազ Մամեդը կատարել ե ուժեղացրած վոռոգում, հատկապես զիշեր ժամանակ, վորպեսզի խոնավությունը յերկար ժամանակ պահպանվի, առաջին հերթին ջրելով բամբակի այն հողամասերը, վորտեղ ամենից ավելի յեր նկատվում բամբակի թառամում: Այդ յեղանակներով նա կարողացավ պաշտպանել բերքը:

Թերություններ յեղել են և մեր աշխատանքի մեջ:

Ամենախոշոր թերությունը մենք համարում ենք մեքենացման թույլ կիրառումը մեր աշխատանքում: Մեքենայացման նշանակությունը մենք լիովին հասկանում, լիովին և գնահատում ենք, բայց ամբողջ դժբախտությունն այն ե, վոր մեր կոլանտեսությունները մեծ մասամբ փոքր հողաբաժիններ ունեն: Մեղանում ամենամեծ հողամասը 5—6 թանաֆ ե: Այդպիսի հողամասերում մեքենալացրած աշխատանք կատարելը շատ դժվար ե, հաճախ մեծ կորուստներ են լինում բամբակի արորումից, շատ ժամանակ է կորչում տրախորների հաճախակի շրջադարձերի վրա և այլն:

Մենք մեր առաջ խնդիր ենք դնում՝ մոտիկ ժամանակում նախապարաստել մեր գաշտերը մեքենայացված մշակման համար, վորովհետև այդպիսի մշակումը ավելի ևս կրաքրացնի բերքատվությունը և կհեշտացնի մեր աշխատանքը.

ԻՆՉՊԵՍ ԵՆՔ ՄԵՆՔ ԿՈՉՄԱԿԵՐՊԵԼ ԲԱՄԲԱԿԻ ԲԵՐՔԱՀԱՎԱՔԸ

Բամբակի բերքահավաքը պսակում ե գործը. բերքահավաքի ժամանակն ե տրվում դաշտային տարեկան աշխատանքի արդյունքի վերջնական գումարը:

Անցած տարիներում քիչ գեղքեր չեն յեղել յերբ մի քանի կոլտնտեսություններում բամբակի բերքը գաշտերում վատ չի յեղել, իսկ մարդիկ այդ բերքը, ինչպես հարկն ե, չեն կարունի հավաքել: Բերքահավաքն սկսել են ուշ և հումուզիթի մի զացել հավաքել: Բերքահավաքն սկսել են ուշ և հումուզիթի մի զացել հավաքել: Կնդուղներից և կեղտոտվել նրանք յերմասը թափվել ե կնդուղներից և կեղտոտվել նրանք յերմասը թափվել հումուզիթը, վորը նրանց աչքի կար ժամանակ չեն հավաքել հումուզիթը, անձրս անձրս տակ տամկացել ե:

Մի քանի կոլտնտեսություններում սպասել են, մինչև վոր մեծ թվով կնդուղներ բացվեն և հետո աշխատել են միանալու դաշտից հավաքել բոլոր կանոնավորապես հասած հումուզիթը: Գրանից մեծ վնաս ե ստացվում: Փետք ե նկատի առնել, վոր դուռը հումուզիթը միանգամից հավաքել անհնարին ե, և նույնիսկ ձեռնտու չե, մինչդեռ սպասում են, թե յերբ կրացվի կընդունի մեծ մասը, մեծ քանակությամբ հումուզիթ ե թափացուղների մեծ մասը, մեծ գումարությամբ հումուզիթ ե թափացուղներից և փշանում:

Յեղել են նաև գեղքեր, յերբ բամբակը հավաքել են այն քան անփույթ կերպով, վոր այն խառնել են չոր տերեների, ճյուղերի, հողագնդերի և այլ կողմանակի առարկաների հետ: Իսկ մեջակն այդպիս հավաքելուց կեղտոտվում ե, փշանում և կորցնում իր արժեքը:

Ալդպես աշխատող կոլտնտեսականները մեծ հանցանք են գործում խորհրդալին իշխանության գեմ: Հենց իրենք, այդ անգույք կոլտնտեսականներն ու կոլտնտեսությունները բամբակի հոգ:

հավաքի վերաբերմամբ իրենց հայտաբերած հանցափոր գործունեցությունից միայն վեն կը կը հանձնել են կառավարությանը կեղոսո, փչացած բամբակ և հասկանալի յե, վորայդ տեսակ բամբակի համար եժան են վճարել նրանց, և կուտնատեսականներն աշխորի դիմաց քիչ են ստացել:

Մեր աշխատանքում մենք յերբեք չենք մոռացել, վորբամբակը խիստ հարկավոր ե պետությանը, վորբամբակն արժեքավոր ապրանք ե: Յեկ յեթե խորհրդացին իշխանությունը վստահել ե մեզ այդ սպիտակ վոսկու բուժումը, ապա ուրեմն մենք պարտավոր ենք տալու ավելի՞ շատ և ամենաբարձր վորակի բամբակ:

Ամենաարժեքավոր տեսակների բամբակ ստանալու համար հարկավոր ե լավ աշխատել նրա վրա և հմտությամբ կազմակերպել բերքահավաքը: Որինակ՝ շատ բամբակաբուծ կոլտնտեսականներ մինչեւ այժմ չգիտեն, վորչի կարելի առավոտյան հավաքած բամբակը խառնել այն բամբակին, վոր թեև նույն որը, բայց ավելի ուշ ե հավաքված: Զի կարելի այն պատճառով, վոր առավոտյան հավաքած բամբակը խոնավ ե լինում, իսկ խոնավ բամբակն անթույլատրելի յե խառնել չորին, վորովհետև դրանով բամբակի վորակն ընկնում ե: Անհրաժեշտ ե խոնավ բամբակը նախապես չորացնել:

Կան նաև այսպիսի կոլտնտեսականներ, վորոնք բերքահավաքի ժամանակ խառնում են իրար բամբակնու տարբեր տեսակները: Նրանք թափում են իրար վրա յեղիպտական բամբակը և հիբրիդները: Դա նույնպես անպայման փշացնում ե բամբակը: Այսպիսի հումուռյթից մեր արդյունաբերությունը վոչ մի կարգին բան արտադրել չի կարող: Մենք կարծում ենք, վոր բամբակն այսպես հանցավոր կերպով խառնող կոլտնտեսականների հետ պետք ե շատ խիստ վարդել: Նրանք արժանի յեն դաշտի տրվելու, վորպես հասարակական սեփականությունը հափշտակողները:

Բամբակի բերքահավաքը հսկալական կարելություն ունեցող գործ ե:

Վոչ մի դեպքում չի կարելի ուշացնել բամբակի բերքահավաքը, բայց և չպետք ե շտապել: Զի կարելի բամբակը հավաքել գեռես լավ չբացված կնդուղներից, վորովհետև կստացվակել գեռես լավ չբացված կնդուղներից: Նույնպես չի կարելի հավաքել չհասունացած հումուռյթ: Նույնպես չի կարելի հավաքել չի նոր բացված կնդուղներից, նրանց մեջ հու-

մույթը գեռես չորացած չի լինում, և ստացված բամբակը վատահասակի յե լինում:

Բերքահավաքի անշնորհք, անկարգ աշխատանքը կարող ե ամենաավողը հետեւանքներ տալ:

Պետք ե միշտ նկատի ունենալ, վոր բամբակի բերքահավաքի ժամանակ ավելի, քան վորեւ ալ ժամանակ, աշխատում են վնասել մեզ և մեր գործը մուռտառել մեր թշնամիները—բայերը և նրանց գործակալները: Ուստի պետք ե միշտ զգուշ լինել և կարողանալ ժամանակին մերկացնել և ամուլ հականարկած տալ բայերին և նրանց գործակալներին:

Ի՞նչպես ենք աշխատել մենք բամբակի բերքահավաքի ժամանակ:

Ողու Գուղել Բահբիդը հավաքն սկսել ե առանց կնդուղների մասսայական բացմանն սպասելու: Նա հավաքն սկսել և այն չափով, վոր չափով յերեացել են բացված կնդուղներ զանազան տեղերում:

Հավաքել ե միայն այն բամբակը, վորը լավ բացվել ե և կատարելապես հասունացել: Հավաքել ե ուշիւուշով, կնդուղների մեջ չի թողել վոչ մի պոկտումներ և մնացորդներ: Ների մեջ չի թողել վոչ մի պոկտումներ և մնացորդներ:

Նրա ողակի յուրաքանչյուր անդամը հագել ե յերկու գորգնոց և տեսակագորել ե բամբակը հենց տեղնուտեղը, հավաքում ժամանակ: Ամեն գորգնոց ունեցել ե յերկու գրպան (բաժանմունք), այնպես վոր միանգամից հնարավոր ե յեղել հավաքել բամբակը չորս գրպանում:

Այդ գրպաններից ամեն մեջ հավաքել են բամբակի զանազան տեսակները: առաջին գրպանում լցրել են ամենաընտիր բամբակը, յերկրորդում—առաջին նորմալ տեսակը, յերրորդում—նույնպես առաջին տեսակը, բայց ավելի շածր վորակի և, վերջապես, չորրորդ գրպանն են լցրել զանազան խառնակի հավաքելու համար (հիբրիդները, հիվանդութ կնդուղները և այլն): Բահնուրդը (հիբրիդները, հիվանդութ կնդուղները և այլն): Բահնուրդի ողակի հավաքած ամբողջ բամբակը յեղել ե լավ, բարձր տեսակներից:

Մենք ըուլորս ել Բահբիդի նման ենք կատարել բամբակի բերքահավաքը:

Ֆայզուլլա Յունուսովն սկսել ե բերքահավաքը սեպտեմբերին, և չանաքել ե այնպես, ինչպես Բահբիդի ողակում: Բամբակը տեսակագորել են իրենց գրպաններում:

Բերքահավաքի տարբեր ժամանակաշրջանների համար տարբեր արտադրական նորմաներ են սահմանվել:

Որինակ, Որպես Մամեդ Ալփոդու հողամասում հավաքն ակալ են սեպտեմբերի 10-ին, յերբ կնգուղները գեռ ևս բուրը բացված չեին, ուստի բամբակի բերքահավաքը վոչ թե համատարած ե լեղել, այլ կատարվել է մաս-մաս, հասած տեղերի ընտրությամբ: Այդ ըրջանի համար սահմանված է յեղել իջեցրած նորմա—12 կիլոգրամ, այսուհետեւ այդ նորման բարձրացվել է մինչև 20 և, վերջապես, մինչև 45 կիլոգրամի:

Բահրիդի ողակում նույնպես բերքահավաքի ժամանակ յերեք նորմա յե յեղել, առաջինը՝ 35, յերկրորդը՝ 45 և յերրորդը՝ 50 կիլոգրամ:

Ստալինաբագի շրջանի հայտնի պիոներունի Մամլաքաթի որինակով մեր կոլանտեսականներից շատերը բամբակը յերկու ձեռքով են հավաքել և գերակատարել իրենց նորման ավելի քան յերկու անգամ, որպական հավաքելով 90—100 կիլոգրամ:

Ողուլ Գուլզել Բահրիդի ողակի կոլանտեսականների մեծամասնությունը հավաքի ժամանակ աշխատել ե այնպես, ինչպես Մամլաքաթը: Նրանք հավաքել են որպական 80—90 կիլոգրամ, իսկ ինքը՝ Բահրիդը, չնայած իր 57-ամյա տարիքին, հավաքել ե որպական 100 կիլոգրամ բամբակ:

Մենք կարող ենք տասնյակ կոլանտեսականներ թվել մեր կոլտնտեսություններից, վորոնք սովորել են աշխատել բերքահավաքի ժամանակ Մամլաքաթի նման և հավաքել են որպական 100 կիլոգրամ բամբակ:

Մեր կառավարությունն ըստ արժանույն պարգևատրել ե 13 տարեկան պիոներունի Մամլաքաթին բարձրագույն պարգեւով—Լենինի շքանշանով, վորովհետեւ նա մեզ բոլորիս ցույց է տվել, թե ինչպես պետք ե աշխատել հավաքի ժամանակ ստախանովական յեղանակով: Մենք սեփական փորձով համոզվել ենք, վոր թե ծերերը և թե լերիտասարդները կարող են հավաքել այնպես, ինչպես Մամլաքաթը:

Հարկավոր ե միայն ցանկություն և մի քիչ համբերություն, վոր սովորենք հավաքել վոչ թե մեկ, այլ յերկու ձեռքով: Բայց պետք ե հաստատ կերպով հիշել, վոր յերկու ձեռքով հավաքելիս բերքահավաքի վորակն ավելի լավ պետք ե լինի: Յեթե մենք թեկուղ էինք անգամ գերակատարենք նորման,

բայց կեղտոտենք բամբակը կամ վատացնենք նրա գորակը, դրանից միայն վաս կտանանք:

Հարկավոր ե հավաքել ուշիւուշով և կնդուղների մեջ վոչ մի պոկտումներ և մնացորդներ չթողնել:

Հարկավոր ե հանգամանորեն տեսակավորել բամբակը բերքահավաքի ժամանակ:

Հարկավոր ե արագ և շատ բամբակ հավաքել և այն ել անպատճառ բարձր վորակի բամբակ:

Հենց այդպես ել աշխատել են Մամլաքաթը և Ողուլ Գուլզել Բահրիդը: Հենց այդպես ել աշխատել են հավաքի ժամանակ նաև մյուս ստախանովական կոլտնտեսականները: Ահա թե ինչու նրանք արժանի յեն փառքի ու պատվի և բարձր պարզեցի:

ԵՆՉՊԵՍ Ե ԿԱԶՄԱԿԵՐՊՎԱԾ ՅԵՂԵԼ ՄԵԶԱՆՈՒՄ ԿՈԼՏՆՏԵՍԱԿԱՆՆԵՐԻ ԱՇԽԱՏԱՆՔԸ

Պատմելով մեր աշխատանքի մասին, մենք ամեն տեղ ընդգծել ենք, թե մեծ բերք ստանալու համար ինչպիսի հսկայական նշանակություն ունի կոլանտեսությունների, բրիգադների, ողակների և մասնավորապես ամեն մի կոլտնտեսականի աշխատանքը լավ կազմակերպելու կարողությունը:

Յեթե ողակում կամ բրիգադում անկարգություն ե տիրում, աշխատանքի մեջ համակարգություն չկա, մարդիկ չգիտեն, թե ինչ պետք ե անեն ամեն որ, ամեն ժամ, այդ դեպքում բան չի գուրս գա:

Յեթե մարդիկ կոլտնտեսության մեջ չեն ստանում վորոշակի և պարզ առաջարկություններ, չեն ճանաչում իրենց ինքնանությունը, հավատացած չեն, վոր իրենց աշխատանքը շարունակ ստուգվում ե, նշանակում ե, վոր դա վատ կոլտնտեսություն ե, և գործերն այնտեղ կարգին չեն գնա:

Յեթե կոլտնտեսականները հավատացած չեն, վոր իրենց աշխատանքը ճշտությամբ և խսորեն հաշվի յե առնվում, յեթե կոլտնտեսության մեջ չի ծավալվում իսկական սոցմրցություն առանձին կոլտնտեսականների, ողակների և բրիգադների միջև, յեթե կոլտնտեսության մեջ չեն կարողանում ժամանակին նշել և պատշաճ կերպով պարզեատրել առջեից գնացող կոլտնտեսականներին և կոլտնտեսուհիներին,—այդ տեսակ կոլտնտեսու-

թյան գինը գրոշ է, դա բոլցելկյան կոլտնտեսություն չե, այլ
բազաը ե:

Հաջողության առաջին և գլխավոր պայմանը՝ մարդկանց այնպիսի դասավորությունն եւ աշխատանքի մեջ, վոր յուրաքանչյուր կոլտնտեսական կարողանա աշխատել իր բոլոր ուժերի և ընդունակությունների չափով:

Իսկ զործն այսպես կազմակերպելու համար մենք՝ զեկավարներս, պարտավոր ենք լավ ճանաչել մեր ողակի, բրիգադի յուրաքանչյուր աշխատավորին:

Մենք պարտավոր ենք ճանաչել մեր դաշտերը և մեր հոգամասի ամեն մի կտոր հողը ինչպես մեր հինգ մատները: Մենք պարտավոր ենք ուսումնամիբել բանվոր անասուններին, ճանաչել մեր ինվենտարը և այն բոլորը, ինչից վոր կախված եւ աշխատանքը դաշտում:

Իմանալով այդ բոլորը, մենք հիրավի կարող ենք սահմանել աշխատանքի իրավես ճիշտ նորմաներ, արմատացնել մեր կոլտնտեսություններում իսկական գործավարձ:

Մենք կարողացել ենք ճիշտ կերպով կազմակերպել աշխատանքը մեր կոլտնտեսություններում, վորպինետե մենք սիրում ենք մեր գործը, սիրում ենք մեր կոլտնտեսությունները, վորովինետե մենք յերկար տարիներ աշխատում ենք միենուն տեղում՝ մեր կոլտնտեսությունների մեջ:

Աքա Խոջառին արդեն չորս տարի յե, վոր աշխատում եւ վորպես բրիգադիր, Խամբայեվը հինգերորդ տարին ե, վոր անփոփոխ աշխատում եւ վորպես կոլտնտեսության նախագահ, Բահմականի աշխատում եւ վորպես կոլտնտեսության նախագահ յե: Զուրաքորիկը յերրորդ տարին ե, վոր ողակավարումի յե: Զուրաքորիկը հինգ տարի կոլտնտեսության նախագահ ե: Խոլմատովը յերեք տարի կոլտնտեսության նախագահ ե և այլն: Մենք շատ լավ բոլորին ճանաչում ենք մեր ողակում կամ բրիգադում:

Վերցնենք, որինակ՝ Ողուլ Գուգել Բահբիդի ողակը, վոր բաղկացած ե յերկու տղամարդուց, վեց կանանցից և մի գեռահասից:

Նրա ողակին զեռ աշնանից ամբացված ե 7,07 հեկտար մի հողամաս: Աշնանից արդեն ողակը հոգս եր քաշում ապագա բերքի մասին: Կարգապահությունն ողակում որինակելի յե: Ողուլ Գուգել Բահբիդին մեծապես սիրում ե հարգում են իր կոլտը՝ տեսականները: Նրա ցուցմունքները կատարվում են ճշտությամբ և լուսականները: Նրա ցուցմունքները կատարվում են ճշտությամբ և լուսականները: Աշխատանքի յեն դուրս գալիս ողակ-

կավարուհու նշանակած ճիշտ ժամանակին: Բահբիդի ողակն աշխատում ե միահամուռ, վորպես մի համերաշխ ընտանիք:

